Ազգ
Azg
9 ՅՈՒՆԻՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 105(4724)
ISSN: 1829-1651

# Ի՞նչ տարածքներ

Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հայտարարությանը երեկ անդրադարձել է ԼՂՀ նախագահի մամուլի խոսնակ **Դավիթ Բաբայանը**. «Ի՞նչ տարածքների, ինչի՞ մասին է ընդհանրապես խոսքը, եթե այս պահի դրությամբ հակամարտության կարգավորումը նախնական փուլում է: Ինձ թվում է՝ այս հայտարարությամբ Ադրբեջանը եւս մեկ անգամ ցույց է տալիս իր իրական նպատակը՝ Արցախի զավթումը: Կազանից առաջ նման հայտարարություններ անելն, իմ կարծիքով, ճիշտ չէ: Դա ցույց է տալիս, որ ստատուս քվոն կպահպանվի դեռ երկար ժամանակ»: Ըստ Դ. Բաբայանի՝ առավելագույնն ի՞նչ կարող է տալ Կազանի հանդիպումը՝ ինչ-որ հայտարարություն խաղաղ կարգավորման, ազգերի ինքնորոշման, տարածքային ամբողջականության սկզբունքների վերաբերյալ, բայց եւ. «Այս պահի դրությամբ կողմերն իրոք ունեն բավական իրարամերժ մոտեցումներ, եւ չեմ կարծում, որ հնարավոր կլինի մոտ ապագայում ինչ-որ ելք ակնկալել: Ընդհակառակը՝ բոլոր աշխարհաքաղաքական զարգացումները, ըստ իս, խոսում են այն մասին, որ ներկա իրավիճակի պահպանումը կլինի ամենաընդունելի տարբերակը, քանի որ չկան նոր մոտեցումներ: Հատկապես Ադրբեջանի կողմից մենք չենք տեսնում որեւէ փոփոխություն պաշտոնական դիրքորոշման մեջ»:

Մ. Խ.

# Կողմերին ներկայացվում է փաստաթղթի «վերջնական տարբերակ»




Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հունիսի 8-ին ընդունել է Արցախում գտնվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեին (ԱՄՆ), Իգոր Պոպովին (ՌԴ) եւ Բեռնար Ֆասիեին (Ֆրանսիա):

Հանդիպման ընթացքում քննարկվել են ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը եւ տարածաշրջանային գործընթացներին առնչվող տարբեր հարցեր: Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից հայտնեցին. երկուստեք նշվել է, որ հակամարտության խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի: Նախագահ Սահակյանը, կրկին անդրադառնալով սահմանից դիպուկահարների հեռացման հարցին, ընդգծել է, որ դա փոխվստահության միջոցների իրականացման կարեւոր բաղադրամասերից մեկն է եւ դրականորեն կազդի բանակցային գործընթացի վրա: **Բակո Սահակյանը** մեկ անգամ եւս ներկայացրել է պաշտոնական Ստեփանակերտի դիրքորոշումը՝ ընդգծելով, որ առանց բանակցությունների բոլոր փուլերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասնակցության անհնարին է ակնկալել որեւէ բեկում հակամարտության կարգավորման գործընթացում: Հանդիպմանը ներկա էին Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Գեորգի Պետրոսյանը, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը, պաշտոնատար այլ անձինք:

Ինչպես տեղեկանում ենք «Ազատություն» ռադիոկայանից, Մինսկի խմբի համանախագահները եւ ԼՂՀ նախագահը մեկ ժամից ավելի տեւած հանդիպումից հետո պատասխանել են լրագրողների որոշ հարցերին: Մասնավորապես ֆրանսիացի **Ֆասիեն** նշել է. «Մենք հույս ունենք, որ նախագահների Կազանում կայանալիք առաջիկա հանդիպմանը կողմերը հավանության կտան կարգավորման համար առաջարկվող փաստաթղթի վերջնական տարբերակին: Խոսքն այն փաստաթղթի մասին է, որը կողմերին առաջարկվել է մոտ երեք ամիս առաջ (մարտի 5-ին-Հ. Ա.) Սոչիում:

Ռուսաստանցի համանախագահ **Իգոր Պոպովը**, սակայն, կարծիք է հայտնել, որ «քննարկվող փաստաթղթի որոշ հարցեր դեռ հղկման ու քննարկման կարիք ունեն»: Պոպովը նշել է, որ «այդ հարցերով զբաղվում են կողմերի արտգործնախարարները եւ, հնարավոր է, որ մինչ Կազանի հանդիպումը այդ աշխատանքներն ավարտված կլինեն: Հույս ունենք, որ Կազանում կողմերը կառուցողական մոտեցում կցուցաբերեն»:

Իսկ ամերիկացի **Ռոբերտ Բրադկեն** ընդգծել է, որ միջնորդները «ու մասնավորապես ամերիկյան կողմը կտրականապես դեմ են հարցը ուժային եղանակով լուծելու որեւէ փորձի: Պատերազմը կարգավորման չի բերի, այլ միայն կհանգեցնի նոր զոհերի ու մարդկային նոր տառապանքների»:

Հիշեցնենք՝ այսօր արդեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կլինեն Երեւանում. նրանց կընդունեն արտգործնախարար Նալբանդյանն ու նախագահ Սարգսյանը:

Հ. Ա.

ԹՈՒՐՔԻԱ-ՍԻՐԻԱ

# «Բարեփոխումներին հակադրվող առաջնորդները ոչնչացվելու են»

## *Թուրքիայի արտգործնախարարը «նախազգուշացնում» է Սիրիայի նախագահին*

«Ֆայնենշլ թայմս» թերթին տված հարցազրույցում, ինչպես երեկ նշել է թուրքական հանրային հեռուստատեսությունը, **Դավութօղլուն** արտահայտվել է Մերձավոր եւ Միջին Արեւելքում «կառավարողներին կառավարվողների հետ հաշտեցնելու» Թուրքիայի կարողությունների մասին, ավելացնելով. «Մինչդեռ արեւմտյան տերությունները տարածաշրջանում փորձում են գործել սեփական ժողովրդի կողմից մերժված արաբ բռնապետների միջոցով»:

Այնուհետեւ Թուրքիայի արտգործնախարարը շարունակել է. «Մեր տարածաշրջանում կան 3 կարգի առաջնորդներ: Նրանցից առաջինը բարեփոխումները համարում է անհրաժեշտություն եւ ընդառաջում, երկրորդը՝ ընդունելով հանդերձ բարեփոխումների անհրաժեշտությունը, ժամանակ շահելու հույսով ձգձգում է դրանք, իսկ երրորդը՝ բացահայտ հակադրվում է բարեփոխումներին: Սիրիայի նախագահ Բաշար Ասադին ասացի, որ երրորդ կարգի առաջնորդները դատապարտված են ոչնչացման, երկրորդ կարգինները ընդամենը ժամանակ են ձգձգելու: Առաջին կարգի առաջնորդներն են միայն, որ մնալու են իշխանության ղեկին: Մենք տարածաշրջանի մեր բարեկամներին ցանկանում ենք տեսնել առաջինների շարքում»:

Ինչպես է արձագանքել նախագահ Ասադը Դավութօղլուին, չգիտենք, որովհետեւ թուրքական հանրայինը չի նշում: Բայց որ Դավութօղլուն, նախազգուշացնելով Սիրիայի նախագահին, իրականում դրական ազդանշան է հաղորդել Արեւմուտքին, ակնհայտ է: Դա ենթադրում է ԱՄՆ-ի գլխավորությամբ արեւմտյան տերությունների տարածաշրջանային քաղաքականությանը ծառայելու պատրաստակամություն: Դրանում համոզվելու համար բավական է նշել Սիրիա-Իրան ռազմավարական համագործակցության, միջազգային ճնշումներով նախագահ Ասադի վարչակարգին կաթվածահար անելու Արեւմուտքի նկրտումների, ինչպես նաեւ Իրանին տարածաշրջանի երկրների աջակցությունից զուրկ տեսնելու Վաշինգտոնի ձգտումների մասին:

Հ. Չ.

# Մոսկվայում պայքար են սկսել ռասիզմի դեմ



Մոսկվայի կառավարությունը հաստատել է միջոցառումների ծրագիր, որը կոչված է քաղաքում թուլացնելու միջէթնիկական հարաբերությունների լարվածությունը: «Վեդոմոստի» թերթի տվյալներով, հատկացվելու է 110,6 մլն ռուբլի:

Մասնավորապես միջռեգիոնալ համագործակցության եւ ազգային քաղաքականության վարչությունը 22 մլն ռուբլի կստանա «Մի՛ տարվիր ռասիզմով» գովազդային նախագծի իրականացման համար: Վարչությունը նաեւ կանցկացնի ազգամիջյան փոխհարաբերություններին նվիրված սեմինարներ ու դասախոսություններ: Կկազմակերպվեն տարբեր ազգությունների նկարիչների ցուցահանդեսներ:

Ծրագրով նաեւ նախատեսվում է թույլ չտալ իջեցված վարձատրությամբ աշխատատեղերի ստեղծում, հանձնարարվում է այցելել ներգաղթյալների համահավաք բնակության վայրեր, բացահայտել խախտումները, կատարել բացատրական աշխատանք:

Ընտանեկան եւ երիտասարդական քաղաքականության վարչությունը կստանա 20,7 մլն ռուբլի, որպեսզի ապահովի մոսկովյան երիտասարդության մասնակցությունը հայրենասիրական ամառային ճամբարների աշխատանքին: Քաղաքի դպրոցներում կանցկացվեն բարեկամության դասեր:

Պրեֆեկտուրաները կստանան 25 մլն ռուբլի եւ կբացահայտեն ընդհատակյա երիտասարդական միավորումների մասնակիցների կենտրոնացման վայրերը: Արդեն աշխատանք է սկսվել մարզասերների հետ:

Մոսկվայում ազգամիջյան հարաբերությունները կտրուկ սրվեցին 2010-ի դեկտեմբերի 6-ին հյուսիսկովկասցիների հետ ծեծկռտուքի ժամանակ «Սպարտակի» երկրպագու Եգոր Սվիրիդովի սպանությունից հետո: Դեկտեմբերի 11-ին Մանեժնայա հրապարակում կազմակերպված հանրահավաքը վերաճեց իրավակարգի ուժերի հետ բախումների:

# Թեհրանը կրկնում է. «Փաստաթղթերը պատրաստ չէին...»

Իրանի պաշտոնական ԻՌՆԱ լրատվական գործակալության հաղորդմամբ՝ երեկ Իրանի կառավարության նիստի շրջանակներում, հանդիպելով լրագրողների հետ, Իրանի նախագահի գլխավոր խորհրդական **Մոջթաբա Սամարե Հաշեմին** անդրադարձել է նախագահ Ահմադինեժադի Հայաստան կատարելիք այցի հետաձգման փաստին: Հաշեմին վերահաստատել է Թեհրանի ավելի վաղ հնչեցրած պաշտոնական հայտարարությունը. «Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի Հայաստան կատարելիք այցի ժամկետի փոփոխման միակ պատճառը փաստաթղթերի պատրաստ չլինելն էր: Հաշվի առնելով, որ Իրանի նախագահի այցը Հայաստան պետք է արդյունավետ լինի, եւ քանի որ ստորագրման ենթակա փաստաթղթերը պատրաստ չեն եղել, այցի ժամկետները փոփոխվել են»:

Իրանի նախագահի գլխավոր խորհրդականը հերքել է այցի հետաձգման առնչությամբ հրապարակված մյուս լուրերը: Օրինակ՝ իրանական «արաննյուզ.իռ» կայքը հաղորդում է, որ այցի հետաձգման վերաբերյալ տարբեր լրատվամիջոցներ տեղեկություններ են հաղորդել, թե Մահմուդ Ահմադինեժադի այցը չի կայացել, քանի որ վերջինիս ուղեկցող պաշտոնյաներից 2-ը երկրից դուրս գալու թույլտվություն չեն ունեցել:

Հիշեցնենք նաեւ ՀՀ նախագահի մամուլի քարտուղար **Արմեն Արզումանյանի** պարզաբանումը. «Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադի այցը Հայաստան հետաձգվել է փոխադարձ համաձայնությամբ: Այցը կիրականացվի առավել հարմար ժամկետներում»:

Հ. Ա.

ԿՈԼՈՐԱԴՈ, ԱՄՆ

# Թուրքիայում շարունակվում է հայ ժողովրդի ժառանգության ոչնչացումը

ԱՄՆ Կոլորադոյի նահանգի Ընդհանուր ժողովը 2011 թ. նստաշրջանի ընթացքում ընդունել է Սենատի 11-035 միացյալ բանաձեւն ապրիլի 24-ն այսուհետեւ «Կոլորադոյում Հայոց ցեղասպանության հիշատակի օր» հայտարարելու վերաբերյալ:

Ըստ ԱԳՆ հաղորդագրության, նշելով, որ այս տարի լրանում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության 96-րդ տարելիցը, փաստաթղթում կոչ է արվում Թուրքիային՝ հարգել միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, փոխհատուցել քրիստոնեական ավերված եկեղեցիների, վանքերի, դպրոցների, հուշարձանների, սրբավայրերի եւ կրոնական այլ ունեցվածքի համար, թույլ տալ քրիստոնեական եկեղեցիների եւ այդ ունեցվածքի օրինական տերերին պահպանել, վերակառուցել եւ վերականգնել այդ ունեցվածքը, ինչպես նաեւ թույլ տալ ազատորեն եւ առանց խոչընդոտների կամ սահմանափակումների կազմակերպել աղոթքներ, պաշտամունքի, կրթական, կրոնական համայնքների հավաքներ:

Փաստաթղթի պատճեններ են ուղարկվել ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային, Կոլորադոյի կոնգրեսական պատվիրակության անդամներին, Կոլորադոյի նահանգապետին, Վաշինգտոնում Հայաստանի եւ Թուրքիայի դեսպանություններին, ինչպես նաեւ մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաների:

Փաստաթղթում նշվում է, որ այս տարի հիշատակվում է 20-րդ դարասկզբի առաջին ցեղասպանության 96-րդ տարելիցը, «Հայոց ցեղասպանության, երբ հայկական ծագմամբ 1.5 մլն տղամարդ, կին ու երեխա զոհ դարձան Թուրքական Օսմանյան կայսրության կողմից իրագործված ցեղասպանության 1915-1923 թթ., եւ որպես հետեւանք պակաս, քան 75 հզ. հայ է ապրում ժամանակակից Թուրքիայի սահմաններով շրջափակված տարածքում»:

Հիշատակելով Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի վկայություններն ու այն հանգամանքը, որ հայ ժողովրդի սպանությունն ուղեկցվել է եկեղեցիների, դպրոցների, արվեստի գործերի եւ մշակութային հուշարձանների պարբերական ոչնչացմամբ, ինչը շարունակվում է մինչ օրս, ընդունված փաստաթուղթը կրկին հիշեցնում է 2009-ին «Նյու Յորք թայմսում» հրապարակված օսմանյան մի նոր փաստաթղթի մասին, որի համաձայն մեկ տարում միայն 972 հզ. հայ է «անհետացել բնակչության ցուցակներից»:

Ըստ Կոլորադոյի Ընդհանուր ժողովի, չնայած ակնհայտ վկայություններին՝ ժամանակակից Թուրքիան «շարունակում է ժխտել ու աղավաղել ցեղասպանության փաստերը, պատիվ է անում մարդկության դեմ հանցագործություն իրականացնողներին որպես ազգային հերոսներ եւ դատապարտում է իր այն քաղաքացիներին, որ երբեւէ փորձում են ընդունել Հայոց ցեղասպանությունը»:

Մտահոգություն հայտնելով Թուրքիայում քրիստոնյա համայնքների կեցությամբ ու իրավունքների առնչությամբ՝ Կոլորադո նահանգի Ընդհանուր ժողովը փաստաթղթով ընդգծում է ավելի քան երկու միլիոն հայերի, ասորիների, հույների ու սիրիացիների նկատմամբ ցեղասպանությունը, հիշատակելով նաեւ Թուրքիայի ժխտողական, մերժողական կեցվածքի անընդունելիությունը:

Ա. Հ.

# Ջավախքը կամաց-կամաց հայաթափվում է

## Գյուղերում աշխատանք չկա, երիտասարդներն էլ դիմում են արտագաղթի



Ջավեն պապը ցավով նշում է, որ գյուղում ավելի շատ թաղման սեղան են նստում, քան ծնունդի: «Կամաց-կամաց ջահելությունը թողնում, հեռանում է: Նրանց մեղադրելու չէ, ստեղ գործ չկա, բան չկա: Հիմի հող մշակելն էլ է բարդ: Սերմացուն՝ թանկ, պարարտանյութը՝ թանկ, եղանակն էլ էնպիսին է, որ հաճախ ցանում ես ու մնում շվարած: Տանջանքդ շատ, ծախսածդ՝ շատ, օգուտը՝ քիչ»:

Ջավախքի գրեթե բոլոր գյուղերում ապրուստի հիմնական միջոցը անասնապահությունն ու հողագործությունն են:

«Ինչո՞վ զբաղվենք, բալա ջան, ուրիշ բան չկա: Կամ պետք է կարտոլ ցանենք, կամ էլ անասուն պահենք, որ մի կերպ յոլա գնանք», պատմում է Կոլյա պապը: Նրա երկու որդիները Ռուսաստանում են: «Ստեղ աշխատանք չկա, որ մնան: Ընտանիքները ո՞նց պահեն: Իրենք գնացին, հետո էլ ընտանիքներին տարան: Մեկ-մեկ հեռախոսով հետները խոսում ենք, քեֆ-հարաքյաթ հարցնում, բայց ի՞նչ իմանամ՝ լավ են, լավ չեն, ո՞նց են ապրում», դժգոհում է Կոլյա պապն ու հառաչելով ասում, որ արդեն երեք տարի թոռներին չի տեսել:

Սաթխայում միայնակ ապրում են Կոլյա պապն ու իր կինը՝ Վարսիկը: «Չոբանություն եմ անում, անասուն պահում, արածեցնում, կինս էլ կաթ-մածուն է մերում քաղաքացիներին վաճառում կամ փոխանակում: Մեր ապրուստը դա է», ասում է նա:

«Դե որ պահանջում են, ստիպված պետք է գնես, չես թողնի, որ երեխադ մնա առանց պայուսակ կամ կոշիկ: Դա էլ գնում ես, գումարի տակ բան չի մնում», ասում է նա:

Անկախ սոցիալական խնդիրներից ու դժվարություններից, Նարինեի ընտանիքը գյուղը լքելու ցանկություն չունի: «Իմ տունն է, իմ բակը, ո՞ւր գնամ: Բոլորը գնում են, մենք էլ որ գնանք, բա էս երկրում հայ չմնա՞», ասում է նա:

Սաթխայի հարեւան Սաղամո գյուղում բնակիչների թիվը չի գերազանցում 2.500-3000-ը: Ապրուստի միակ միջոցը անասնապահությունն է:

Գյուղի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Ռոզա Կյուրեղյանը սովորել է Երեւանում: «Շատերը գալիս են Հայաստան սովորելու ու մնում են Երեւանում, ես հետ եկա: Վերջ ի վերջո մեկը պետք է գա, որ հայաթափություն չլինի, որ մեր երեխաներին փոխանցենք մեր իմացածը: Մեր ծննդավայրն է, լքենք ո՞ւր գնանք», ասում է Ռոզան:

Ռոզայի բազմանդամ ընտանիքն ապրում է երկուսենյականոց տանը:

«Ամուսնուս ծնողներն են, մեր 4-հոգանոց ընտանիքն է, ամուսնուս եղբոր ընտանիքը: Դժվար է, բայց ի՞նչ արած: Այլ ճանապարհ չկա»:

Ընտանիքի հիմնական կերակրողը 10 կովն է: «Կովը կթում ենք, մեկ լիտրը 75 թեթրիով վաճառում: Դա է մեր հիմնական ապրուստը, որ անասունները չլինեն, կորած ենք», ասում է նա:

Շուրջ 5.000 բնակիչ ունեցող Սաթխան 2000 տարվա պատմություն ունի: Ինչպես նախկինում, այսօր էլ Սաթխան հիմնականում բնակեցված է հայերով: Այսօր Սաթխայում բնակիչների թիվը կրճատվել է:

Տարվա այս եղանակին գյուղի ջահելները բռնում են խոպանի ճանապարհն ու մեկնում Ռուսաստան: Նրանց մեծ մասը մեկնում է ընտանիքներով եւ անվերադարձ:

«Իմ ամբողջ օրը դաշտում է անցնում: Կարտոլ ենք ցանում: Ամուսինս էլ չոբան է, գյուղում մալը տանում է սար, արածեցնում: Ուրիշ հետաքրքիր բան չկա», պատմում է Սաթխայի մեկ այլ բնակչուհի՝ Նարինեն:

Միջին հաշվարկով ամուսիններն ամսական վաստակում են 2000 լարի: Գումարը հազիվ բավականացնում է սնունդին, կոմունալ վարձերին եւ գրենական պիտույքներին:

Գյուղի միջնակարգ դպրոցում, որտեղ աշխատում է Ռոզան, 13 աշակերտ է սովորում:

«Նախանցյալ տարի մեկ առաջինդասարանցի է եղել, ու քանի որ մեկ երեխայի համար վարձատրությունը շատ քիչ է, ապա պետության որոշմամբ առաջինդասարանցուն նստեցրին երրորդ դասարանի աշակերտների հետ: Ուսուցիչների համար շատ դժվար էր, որովհետեւ 45 րոպեում պետք է հասցնես ե՛ւ երրորդդասարանցուն բացատրես, ե՛ւ առաջինդասարանցուն»:

Ինչպես Սաթխայի, Սաղամոյի միջնակարգ դպրոցում էլ հայոց պատմության դասագրքեր չկան:

Ուսուցչուհին նշում է, որ վրացերեն թարգմանությամբ պատմության դասագրքերն անբավարար են, սակայն իրենք փորձում են թերությունները շտկել:

«Հայ ժողովրդի պատմություն առարկան դպրոցում չենք անցնում: Բայց մյուս առարկաները՝ Վրաստանի պատմություն, նորագույն կամ միջին դարերի պատմությունը, նորմալ դասավանդում ենք»:

Երբ հարցնում ես գյուղի խնդիրների մասին, Ռոզան ասում է՝ խոպանի պատճառով գյուղի հարսները մենակ են մնացել:

Գյուղի տղամարդիկ աշխատանք գտնելու հույսով մեկնում են Ռուսաստան: Սակայն վերջին շրջանում Ռուսաստանում աշխատանք ճարելը դարձել է գերխնդիր:

«Նախանցյալ տարի ամուսինս ու տագրս գնացել էին Ռուսաստան, բայց հենց սահմանից հետ էին ուղարկել, որովհետեւ Վրաստանի քաղաքացիներ էին: Մեզ համար շատ վատ է, որ Վրաստանը խզեց իր հարաբերությունները Ռուսաստանի հետ»:

Հիմա Ջավախքում շատերն են ձեռք բերում Հայաստանի քաղաքացիություն: Սա ոչ միայն հայրենիքի հետ կապի ամրապնդմանն է ուղղված, այլեւ, որ կարողանան Ռուսաստանում աշխատանք գտնել:

«Ամուսինս էլ Հայաստանի քաղաքացիություն ընդունեց, որպեսզի կարողանա Ռուսաստանում աշխատանք գտնել: Դա դեռեւս խնդիրներ չի առաջացնում, սակայն չի բացառվում, որ վրացական իշխանությունները բացասական կվերաբերվեն: Բայց ինչ անես, ելք չկա», ասում է Ռոզան:

«Եթե ես կարողանայի գյուղում ինչ-որ բան փոխել, առաջին հերթին բուժկետ կկառուցեի: Չունենք առաջին շտապ օգնության բուժկետ: Գանձայում կա հիանալի բժշկուհի, բայց դա հեռու է: Մեր գյուղում էլ պետք է բուժկետ լինի, որ ցավերով հիղի կնոջը կամ սրտանոթային խնդիրներ ունեցող ծերունուն չհասցնեն Գանձա կամ Ախալքալաք», եզրակացնում է Ռոզան:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ջավախք-Երեւան

# Բազմանդամ ընտանիքը հայցում է պետության «բարեխղճությունն ու գթասրտությունը»

Օրերս «**Ազգի**» խմբագրություն էր եկել Տերյան 11/14 հասցեում բնակվող Գրիգոր Ղուկասյանը՝ ներկայացնելու իր եւ իր ընտանիքի նկատմամբ տեղի ունեցող անմարդկային վերաբերմունքը «Միլենիում Քոնստրակշն» ընկերության կողմից: Վերջինս իրացման գոտի ճանաչված այդ տարածքի կառուցապատողն է եւ Ղուկասյանների բնակարանի դիմաց նրանց առաջարկում է 6,8 մլն դրամ փոխհատուցում, ինչի մասին որոշում է կայացրել նաեւ Կենտրոն եւ Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանի դատավոր Էդիկ Ավետիսյանը: Դրա հետեւանքով Գրիգոր Ղուկասյանի 6-հոգանոց ընտանիքը, այդ թվում՝ նորածին երեխայի, անկողնային հիվանդ թոշակառուի եւ բանակում ծառայող երիտասարդի առկայությամբ, կհայտնվի ուղղակի փողոցում: Նշված գումարով նրանք չեն կարող անգամ Երեւանի հեռավոր թաղամասերում մեկսենյականոց բնակարան ձեռք բերել: Գրիգոր Ղուկասյանն ընդունում է, որ իր ընտանիքի բնակեցրած տարածքի սեփականության իրավունքի վկայական չունի, բայց հայցում է պետության «բարեխղճությունն ու գթասրտությունը», հուսալով, որ բավարար փոխհատուցում կամ բնակմակերես կտրվի իր բազմանդամ ընտանիքին:

Ա. Ս.

ՀԱՄԱԺՈՂՈՎ

# Անշարժ գույքի գրանցման ցուցանիշով Հայաստանը առաջատար հնգյակում է

## Հայտարարվեց ԱՊՀ քարտեզագիրների ու գեոդեզիստների միջպետական խորհրդի նիստի ընթացքում




**ԱՊՀ պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի եւ Երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի 31-րդ նիստը երեկ բացվեց Երեւանում, որին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղրղզստանի, Մոլդովայի, Թուրքմենստանի, Տաջիկստանի պատվիրակությունները: Մասնակիցներին ողջունեց Հայաստանի փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը: Բացման խոսքով հանդես եկավ միջպետական խորհրդի նախագահ Սերգեյ Վասիլեւը: Հայաստանի անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Երվանդ Զախարյանն անդրադարձավ ոլորտում անցած տարիների ընթացքում իրականացված եւ առաջիկայում նախատեսվող բարեփոխումներին:**

**Երվանդ Զախարյանը մասնավորապես նշեց, որ նախորդ տարիների ընթացքում հավաքվել է անշարժ գույքի կադաստրային տվյալների տեղեկատվական հսկա շտեմարան, իրականացվել են անշարժ գույքի առաջին պետական գրանցման աշխատանքներ: Մի քանի տարի շարունակ, Համաշխարհային բանկի գնահատմամբ, անշարժ գույքի գրանցման ոլորտում Հայաստանի Հանրապետությունը տեղ էր զբաղեցնում առաջին հնգյակում: Միաժամանակ, նա հավելեց, դեռ կան որոշ խնդիրներ անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ոլորտում: Ըստ Երվանդ Զախարյանի՝ կադաստրի համակարգում արդեն ներդրվում են նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան առավել որակյալ ծառայություն մատուցել քաղաքացիներին:**

Ա. Ս.

# 10 մլն դոլար «Արարատբանկին» ՀԵԵՀ-ից

**Ինչպես տեղեկացանք «Արարատբանկից», Հարավարեւելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամից (ՀԵԵՀ) բանկին 10 մլն դոլարի վարկ է տրամադրվել, որի մասին պայմանագիրը Տիրանայում անցկացված ՀԵԵՀ տարեկան ժողովի ժամանակ կնքել են «Արարատբանկի» գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանը եւ հիմնադրամի խորհրդի նախագահ Կլաուս Գլաուբիթը: Վարկային ծրագիրն ուղղված է Հայաստանում միկրո եւ փոքր բիզնեսի ֆինանսավորմանը:**

**«Արարատբանկի» գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանը, բարձր գնահատելով Հարավարեւելյան եվրոպական հիմնադրամի (EFSE) հետ համագործակցության մակարդակը, նշել է, որ անցած տարվա հոկտեմբերին այս հեղինակավոր գործընկերոջ հետ կնքված 5 մլն դոլարի պայմանագրի շրջանակներում բանկը վարկավորել է միկրո եւ փոքր բիզնեսի մոտ 110 վարկային ծրագիր: Նա նաեւ վստահեցրել է, որ նոր վարկային ծրագիրը նույնպես զգալի ներդրում կլինի Հայաստանում միկրո եւ փոքր բիզնեսի զարգացման համար:**

Ա. Ս.

# Արտասովոր բռնկում Արեգակի վրա

**Աստղաֆիզիկոսները նկարահանել են Արեգակի վրա տեղի ունեցած արտասովոր բռնկում: Սպեկտրի մի քանի դիապազոններում արված տեսագրության վրա երեւում են արտանետումներ, ինչպես նաեւ բռնկման տեսարանը հեռվից: Այդ մասին հաղորդում է Helioviewer.org կայքը:**

**Բռնկումը ստացել է հզորության M2 վարկանիշը: Գիտնականներն օգտագործում են բռնկման հզորության 5 աստիճան (թույլից ուժեղ)՝ A, B, C, M, X, իսկ թվերը դասակարգման ներքին աստիճանավորումն են: Այսպիսով, տեղի ունեցած բռնկումն այնքան էլ ուժեղ չէ (2011-ի մարտին արձանագրված բռնկման հզորությունը X1.5 էր):**

**Այս անգամ արտասովոր է մատերիայի վիթխարի քանակության արտանետումը: Տեսագրության վրա երեւում է, թե ինչպես համեմատաբար սառը (80 հազար կելվին) մատերիան հետ է ընկնում Արեգակի վրա, գրգռելով լուսապսակը, որի ջերմաստիճանը մոտ 1,5 մլն կելվին է:**

**ԱՄՆ ազգային օդերեւութաբանական ծառայության տիեզերական եղանակի կենտրոնը կանխատեսում է, որ բռնկումը կարող է հարուցել փոքր գեոմագնիսական փոթորիկ:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ո՞ր բժշկական տեղեկանքները չեն պահանջվի

## *Ազատելով մեզ ժամանակ վատնելուց եւ անիմաստ ծախսերից*

Մանկահասակ երեխաներ ունեցողներին շատ ծանոթ է իրավիճակը, երբ երեխայիդ նախ տանում ես մանկապարտեզ, ապա դպրոց, հետո սպորտային որեւէ խմբակի, անպայման պոլիկլինիկայից բժշկական տեղեկանք պետք է ներկայացնես նրա առողջ լինելու մասին: Ստիպված ես լինում գնալ պոլիկլինիկա եւ որպեսզի ժամանակ ու նյարդեր չվատնես առողջ երեխայիդ բոլոր սենյակներով անցկացնելու համար, վճարում ես 5 հազար դրամ տեղամասային թերապեւտին, որի մեծ մասն ուղղվում է պոլիկլինիկայի գլխավոր բժշկի գրպանը, եւ մի երկու օրից ստանում բաղձալի տեղեկանքը: Ընդ որում, բացառված չէ, որ մեկ-երկու տարվա մեջ երեք անգամ հարկադրված լինես դիմելու նույն տեղեկանքը ստանալու համար, պարզապես դրանք տարբեր հաստատություններ ներկայացնելու համար: Ոչ ոք չգիտի, թե ի՞նչ նպատակ է հետապնդում տեղեկանքների հայթայթման այդ գործընթացը, բայց պարտադրված ընդգրկվում է դրանում:

Կառավարության նախորդ նիստում վերոնշյալ տեղեկանքների հետ կապված պատմություններին կարծես թե վերջ տրվեց: «Դրանց մատուցման կարիքն ուղղակի չկա, որովհետեւ դրանք ավարտվում են դրամաշորթությամբ: Գնում ես, փողը տալիս ես՝ տեղեկանքը տալիս են առանց ստուգելու: Մենք ինչո՞ւ պետք է այս գործառույթը շարունակենք», նման կարծիք էր հայտնել վարչապետ **Տիգրան Սարգսյանը** եւ անհրաժեշտ համարել, որ այդ առումով առողջապահության նախարարության գործելաոճը արժանանա բոլորի աջակցությանը:

Տվյալ հարցի վերաբերյալ կառավարության որոշմամբ, առողջապահության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, կրթության եւ գիտության, գյուղատնտեսության նախարարներին, մարզպետներին՝ համապատասխան նախարարությունների եւ մարզպետարանների ենթակայության սոցիալական, կրթական, առողջապահական հաստատություններին հանձնարարվեց, իսկ Երեւանի քաղաքապետին առաջարկվեց ձեռնպահ մնալ դիմորդներից եւ աշխատողներից կամ աշխատանքի ընդունվելու համար դիմած քաղաքացիներից, օրենսդրությամբ չնախատեսված եւ չպահանջվող, մասնավորապես՝ ուսումնական հաստատություններ դիմորդների եւ աշխատանքի ընդունման բժշկական հետազոտության, սննդի եւ նրանց հավասարեցված աշխատողների պարբերական բժշկական զննության, ուսումնական (ուսումնարաններ եւ բարձրագույն ուսումնական հաստատություններ), մասնավոր հանրակրթական դպրոցական ու նախադպրոցական հաստատությունների մանկավարժների եւ դաստիարակների առողջական վիճակի պարբերական բժշկական զննության, լողավազանից օգտվելու վերաբերյալ, սանատոր-կուրորտային բուժման մեկնողների համար, սանատոր-կուրորտային բուժման ուղեգրի ստացման համար, երեխայի որդեգրման եւ խնամակալության համար բժշկական, մինչեւ 18 տարեկան երեխաների առողջության կամ հիվանդության վերաբերյալ (այդ թվում՝ մարզադպրոց եւ սպորտային խմբակներ հաճախելու նպատակով), հիվանդությունից հետո երեխաների հաճախումը դպրոց, մանկապարտեզ թույլատրելու վերաբերյալ, ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու համար, նախադպրոցական հաստատություն կամ դպրոց (շրջապատի թերթիկ) ընդունվելու եւ այլ տեղեկանքներ պահանջելուց կամ տրամադրելուց:

Ընդհանուր առմամբ, վերացվելու է 23 տեղեկանքների ներկայացման անհրաժեշտությունը: Հազարավոր քաղաքացիներ կազատվեն լրացուցիչ գումարներ եւ ավելորդ ժամանակ ծախսելուց:

Բնական է, մտահոգություն կարող է առաջանալ, թե արդյոք այս որոշումը ռիսկեր չի՞ պարունակում, հիվանդությունների տարածման պատճառ չի՞ կարող դառնալ: Կարելի է իհարկե ասել, որ արդյոք նույն ռիսկերը չկա՞ն, երբ տեղեկանքը տրամադրում են առանց բժշկական ստուգում անցկացնելու: Հարկ է նաեւ նշել, որ մինչ այժմ այս կամ այն պատճառով բռնկված վիրուսային կամ աղիքային համաճարակները ոչ մի կերպ կապ չեն ունեցել վերոնշյալ տեղեկանքների առկայության կամ բացակայության հետ: Պարզապես հարկ է խստացնել այն պետական եւ մասնավոր կառույցների նկատմամբ դրված սանիտարահիգիենիկ պահանջները եւ հետեւել դրանց պահպանմանը, որպեսզի չվտանգվեն մարդկանց կյանքն ու առողջությունը: Դրանք ջրային տնտեսության, սննդամթերքի արտադրության, առողջապահական եւ նմանատիպ այլ հաստատություններն են, որոնց առջեւ դրված չափորոշիչների պահպանմամբ, այլ ոչ թե քաղաքացիներից պահանջվող անիմաստ տեղեկանքներով, պետք է կանխարգելվի հիվանդությունների կամ համաճարակների տարածումը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Լակոտ» բառն արժե 200.000 դրամ




Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում երեկ հրապարակվեց արդեն մի քանի ամիս ընթացող «Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» օրաթերթի» գործով դատական վճիռը: Նախագահող դատավոր Ռուբեն Ափինյանի որոշմամբ «Երկիրը» պարտավորվում է «Գրեյթ Վելլի» ընկերության սեփականատեր, ՀՀԿ-ական պատգամավոր Տիգրան Արզաքանցյանին վճարել 200.000 դրամ «լակոտ» բառով պատգամավորի պատիվն ու արժանապատվությունը արատավորելու համար: Թերթը պարտավորվում է նաեւ պատգամավորին վճարել 80.000 դրամ փաստաբանական ծախսերի եւ 8.000 դրամ՝ դատական ծախսերի համար: Մնացած մասով պատգամավորի հայցը դատարանը մերժեց՝ դրանք որակելով անհիմն:

«Երկիրը» պարտավորվում է նաեւ հրապարակել դատավճռի եզրափակիչ մասը:

Հիշեցնենք, որ հունվարի 13-ին, «131 դեմք ու դիմակ» խորագրի ներքո անդրադառնալով Արզաքանցյանին, թերթը գրել էր, որ նա «խորհրդարանում աչքի է ընկնում որպես «ստիլյագ», շարունակ գլուխ է գովում, թե ինքնաթիռներով գեղեցկուհիների է բերում-տանում, հայտնի է որպես խաղատների մշտական հաճախորդ, շարունակ ծեծ ուտելու սովորություն ունի, իսկ ամեն անգամ ծեծվելուց հետո ամիսներով բուժվում է եւ չի հաճախում ԱԺ նիստերին, խոսում է... մի քանի օտար լեզուներով, բայց առավել հասկանալի խոսում է հայրենի Քյավառա բարբառով»:

Պատգամավորը վիրավորանք էր համարել հոդվածում գրված «Էդ լակոտը», «ստիլյագ», «առավել հասկանալի խոսում է հայրենի Քյավառա բարբառով», «աղջիկներ է տանում-բերում», «հայտնի է նաեւ որպես կազինոների մշտական հաճախորդ», «շարունակ ծեծ ուտելու սովորություն ունի» արտահայտությունները եւ զրպարտության հետեւանքով իրեն հասցված վնասի փոխհատուցման համար 3 միլիոն 568 հազար դրամ էր պահանջել օրաթերթից:

Վճռի հրապարակումից հետո Արզաքանցյանի փաստաբան **Վահե Հովսեփյանն** ասաց, որ միայն վճռին առավել մանրամասն ծանոթանալուց հետո կորոշեն՝ բողոքարկում են, թե ոչ:

Միանշանակ չէր նաեւ օրաթերթի գլխավոր խմբագիր **Բագրատ Եսայանի** պատասխանը վճիռը բողոքարկելու վերաբերյալ: Իրենք էլ կծանոթանան վճռին եւ վերջնական որոշում կընդունեն:

Թեպետ նախօրեին Եսայանը հայտարարել էր, որ թեկուզ մեկ դրամ վճարելու պարտավորություն ենթադրող վճռի դեպքում իրենք կբողոքարկեն, սակայն երեկ դատարանում ասաց, որ վճիռն իրենց համար անսպասելի էր:

«Կարելի է ասել, որ միաժամանակ մասնակի բավարարված եւ բավարարված չենք վճռից», ասաց նա:

Անդրադառնալով «լակոտ» բառը վիրավորական որակելու դատարանի վճռին՝ Եսայանն ընդգծեց, որ իրենք այդ բառը մեջբերել են Հրանտ Բագրատյանի հայտարարությունից, եւ երբ պարզվել է, որ Բագրատյանը նման բան չի ասել, հայտարարությունը հրապարակել են թերթում՝ համոզված լինելով, որ հարցը դրանով սպառված է:

Հ. Հ.

2300 ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

# Տոն ապագա մանկավարժների համար



**Առաջին անգամ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության մեջ մեկ օրում դիպլոմ ստացան համալսարանի բոլոր՝ 2300 շրջանավարտները: Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը օրհնանքի խոսք ասաց ապագա մանկավարժներին եւ վստահություն հայտնեց, որ այսօրվա շրջանավարտները կհամալրեն այն երախտավորների շարքերը, որոնք անձնվիրաբար ծառայել են ապագա սերունդների կրթման ու դաստիարակման գործին:**

**Ամենայն հայոց կաթողիկոսն անձամբ մանկավարժական համալսարանի լավագույն 10 շրջանավարտներին հանձնեց ավարտական վկայականները:**

**Միջոցառումը շարունակվեց Հայաստանի պետական կամերային նվագախմբի տոնական համերգով: Հնչեցին կոմիտասայան մանրանվագները, Աստոր Պիացոլլայի «Տանգո»-ների շարքը, Առնո Բաբաջանյանի «Վոկալիզ»-ը, Ռուբեն Ալթունյանի «Բերդ» եւ «Քոչարի» մշակումները եւ հատվածներ Անտոնիո Վիվալդիի «Տարվա եղանակներից»:**

**Միջոցառումն ավարտվեց տոնական շքեղ հրավառությամբ եւ հաջորդ տարի կրկնելու խոստումով:**

**Միջոցառմանը մասնակցում էին կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, կառավարության եւ խորհրդարանի, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:**

**Այս անմոռաց երեկոն կմնա Մանկավարժական համալսարանի շրջանավարտների հուշերում իրենց ողջ կյանքի ընթացքում:**



# 5 սուպերմարկետներ ճանաչվեցին գերիշխող դիրք ունեցող

**Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը ուսումնասիրություն էր սկսել մանրածախ առեւտրի ոլորտում՝ պարզելու համար այս դաշտում գերիշխող դիրք ունեցողներին: Ըստ հանձնաժողովից մեզ տրամադրած հաղորդագրության, հունիսի 8-ին, ուսումնասիրության արդյունքներով գերիշխող դիրք ունեցողներ են ճանաչվել «Ալեքս գրիգ», «ՍԱՍ գրուպ», «Ֆրեշ», «Սթար Դիվայդ» եւ «Նոր Զովք» ընկերությունները՝ համապատասխանաբար «Երեւան Սիթի», «ՍԱՍ», «Ֆրեշ», «Սթար» եւ «Նոր Զովք» խանութների ցանցերով: Այս որոշումը նշանակում է, որ նրանց նկատմամբ հանձնաժողովը կսահմանի վերահսկողություն, իսկ օրենքի խախտումներ թույլ տալու դեպքում՝ տնտեսվարողները կենթարկվեն պատասխանատվության: Նախկինում օրենքը թույլ չէր տալիս նման ուսումնասիրություն իրականացնել մանրածախ առեւտրի ոլորտում, ինչը կարգավորվել է նոր եւ արդեն ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով:**

# «Սիթի պետրոլ գրուպի» նկատմամբ վարույթ է հարուցվել

**Բենզինի եւ դիզելային վառելիքի շուկաներում սկսված ուսումնասիրությամբ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը բացահայտել է այս շուկայում գործող որոշ տնտեսվարողների կողմից օրենքի խախտումներ եւ որոշել վարչական վարույթ հարուցել «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերության նկատմամբ: Այս ընկերությունը բենզինի շուկայում զբաղեցնում է 41,7 տոկոս, իսկ դիզելային վառելիքի շուկայում՝ 40,8 տոկոս:**

# Ովքե՞ր են գերիշխում սուրճի շուկայում

**Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից սուրճի շուկայում կատարված ուսումնասիրությունների ընթացքում պարզվել են այս շուկայի գերիշխողները: Ինչպես տեղեկացանք հանձնաժողովից, հատիկավոր սուրճի շուկայում գերիշխող դիրք ունեն «Կաֆե դյու Բրազիլ», «Գրանդ Քենդի» եւ «Վիվա Առգո» ընկերությունները, որոնք իրացման ծավալներով զբաղեցնում են շուկայի 85,66 տոկոսը: Աղացած սուրճի շուկայում գերիշխող են ճանաչվել «Ալեքս գրիգ», «Արմեն-Համիկ» եւ «Ռոյալ-Արմենիա» ընկերությունները, որոնք իրացման ծավալներով միասին զբաղեցնում են այս ոլորտի 72,87 տոկոսը: Հանձնաժողովի երեկվա նիստում որոշվել է տեղեկատվության ներկայացման պահանջները խախտելու համար «Ռոյալ-Արմենիա» եւ «Վիվա Առգո» ընկերությունների նկատմամբ հարուցել վարչական վարույթ:**

Ա. Մ.

ԱԶԳ

## Նոր հրատարակություններ

# «Սեւ գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների եւ Հայոց ցեղասպանության մասին»

### *Բացառիկ այս աշխատությունը թուրքական ժխտողականության դեմ պայքարելու արդյունավետ միջոց է նաեւ*

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը հետզհետե սպառում է թուրքական ժխտողականության դիրքերը: Սակայն որքան էլ ժխտողականության դիրքերը սպառվեն, կամ նախկին արտգործնախարար Իլթեր Թուրքմենը, նախկին դեսպան Յալըմ Էրալփը, մի շարք մտավորականներ ի լուր սեփական իշխանությունների հայտարարեն, որ Հայաստանը երբեւէ չի հրաժարվի ցեղասպանության ճանաչման քաղաքականությունից, ընդ որում բացառելով «պատմաբանների համատեղ հանձնաժողովում հայկական կողմի հետ 1915-ի իրադարձությունների շուրջը ընդհանուր հայտարարի գալու» հավանականությունը, այնուամենայնիվ Թուրքիան ժխտողականությունից հրաժարվելու որեւէ նախանշան չի ցուցաբերում: Ընդհակառակը, ճանաչման գործընթացի ծավալմանը զուգընթաց Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի պետական թեզը հանդիսացող ժխտողականությունը դառնում է մարտնչող, ստանում հետզհետե ագրեսիվ բնույթ:

Ըստ երեւույթին Թուրքիան այլ «հնարավորություն» էլ չունի, որովհետեւ ժխտողականությունից հրաժարվելը նրա համար կնշանակի ինքնակամ վերացնել երկրում Հայկական հարցի վրա դրված տաբուն: Դա թուրք գիտնականների առջեւ կբացի Հայոց ցեղասպանությունը ոչ թե ժխտողականության դիրքերից, այլեւ գիտականորեն՝ որպես պատմական փաստ ուսումնասիրելու հեռանկարը:

Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցի գիտական ուսումնասիրության դեպքում լիարժեք կբացահայտվի ճշմարտությունը թուրք հասարակության առջեւ: Միաժամանակ կպարզվի, որ քեմալականների ազգային պետությունը ստեղծվել է այլ ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքում, Մուստաֆա Քեմալը շրջապատված է եղել հայ ժողովրդի դահիճներով, հետեւաբար ժամանակակից Թուրքիայի հիմնադիրները ցեղասպանության իրագործած մարդասպաններ են:

Այս ամենը անհրաժեշտ կդարձնի ինչպես քեմալական շարժման, այնպես էլ Թուրքիայի Հանրապետության ստեղծման պատմության վերանայումը: Այսպիսով, անխուսափելի կդառնա Աթաթուրքի տաբուի վերացումը երկրում: Այլ կերպ՝ քանի դեռ գոյություն ունի այս տաբուն, Թուրքիան չի կարող առերեսվել սեփական պատմության հետ: Հետեւաբար նա շարունակելու է կառչած մնալ Հայոց ցեղասպանության ժխտողականությունից: Այս հանգամանքը ցեղասպանության միջազգային ճանաչման ներկա փուլում առանձնակի կարեւորում է թուրքական ժխտողականությունը հակակշռելու նշանակությունը, իսկ դա հաշվենկատ հակահարված է ենթադրում:

Հակահարվածի թերեւս ամենաարդյունավետ ձեւը հայկական կոտորածների եւ Հայոց ցեղասպանության մասին օտարերկրացի հասարակական, քաղաքական, գիտական, գրական եւ արվեստի գործիչների վկայությունների հանձնումն է միջազգային հանրության ուշադրությանը: Այս առումով հատկանշական է վերջերս ՀՀ վարչապետ **Տիգրան Սարգսյանի** մեկենասությամբ Երեւանում լույս տեսած «**Սեւ գիրք. Նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների եւ Հայոց ցեղասպանության մասին**» աշխատությունը, որը նվիրվում է Մեծ եղեռնի 100-ամյակին:




«Հայագիտակ» հրատարակչության լույս ընծայած այս գիրքը, **Պետրոս Հովհաննիսյանի** խմբագրությամբ, հրատարակության է պատրաստել **Ալբերտ Խոյանը**: Ինքն էլ գրի է առել հակիրճ, բայց բովանդակալից առաջաբանը, որտեղ մասնավորապես գրում է. «Ընթերցողը գրքի բազմաթիվ էջերում կգտնի հայ ժողովրդի անշահախնդիր, ազնիվ, նվիրյալ բարեկամների ճշմարիտ կերպարը եւ արեւմտյան դիվանագիտության անթափանց, բազմաշերտ, բազմակողմանի դեմքը: ...«Սեւ գրքի» հեղինակները, որպես միջազգային մի բազմազգ, յուրահատուկ խորհրդարան, այս արտակարգ վեհաժողովում ի լուր աշխարհի ճանաչում եւ դատապարտում են Հայոց ցեղասպանությունը»:

«Սեւ գիրքը» 715 էջ է, բացի նախաբանից ունի ուղեցույց եւ անվանացանկ: Գրքում զետեղված են հայկական կոտորածների եւ Հայոց ցեղասպանության մասին վկայող օտարերկրացի ավելի քան 100 անվանի գործիչների հոդվածներ, ելույթներ, հուշեր, գեղարվեստական ստեղծագործություններ, հատվածներ աշխատություններից, որոնց զգալի մասը առաջին անգամ է ներկայացվում:

Այս գործիչներից թերեւս առանձնացնենք թուրքական կոտորածներից պաշտպանելու համար իրեն եւ իր բարեկամներին հայ ժողովրդի տրամադրության տակ դնելու պատրաստակամություն հայտնող Իտալիայի ազգային հերոս Ջուզեպպե Գարիբալդիի կրտսեր որդուն՝ Ռիչիոտի Գարիբալդիին եւ Հարավսլավիայի նախագահ Իոսիփ Բրոզ Տիտոյին, որն ի լուր աշխարհի հայտարարել էր. «Հայ ժողովուրդը երկու աշխարհամարտերի ընթացքում միշտ կանգնած է եղել դաշնակիցների կողքին եւ միշտ պայքարել է նրանց դասի համար: Հայ ժողովրդի արդար իրավունքն է ունենալ մեծ Հայաստան»: Տիտոն դրանով կարծես նախապես կանխագուշակել էր Հայոց ցեղասպանության հետեւանքների վերացման փուլը, որը հաջորդելու է միջազգային ճանաչման փուլին:

Գրքում ներկայացված են ոչ միայն մեր ժողովրդի անկեղծ բարեկամները, այլեւ այնպիսի օտարերկրացի գործիչներ, որոնք ամենեւին էլ աչքի չեն ընկել հայամետությամբ: Սակայն այս գործիչները եւս, անկախ հայերի նկատմամբ վերաբերմունքից, իթթիհատականների գազանային էությունն ու օսմանյան Թուրքիայում Հայկական հարցը հայերին իսպառ բնաջնջելու միջոցով լուծելու երիտթուրքական հրեշավոր ծրագիրը բացահայտելու հարցում միացել են հայ ժողովրդի բարեկամներին:

Այլ կերպ՝ «Սեւ գրքում» ներկայացված գործիչների ընտրությունը ճիշտ է կատարվել: Դա ենթադրում է գրքում ընդգրկված օտարերկրացի գործիչների հոդվածների, հրապարակախոսությունների, ստեղծագործությունների խորը իմացություն, մատենագիտական լուրջ բազա, ինչպես նաեւ բազում տարիների քրտնաջան աշխատանք: Եթե օտարերկրացի գործիչների ճիշտ ընտրությունը անաչառություն է ապահովում «Սեւ գրքին», ապա գործիչների ստեղծագործության իմացությունն ու մատենագիտական բազան բացառիկ նշանակություն են հաղորդում ամենայն բծախնդրությամբ պատրաստված այս աշխատությանը: Ընդ որում, գիտական պատշաճ մակարդակ եւ հրատարակչական բարձր որակ ունեցող այս աշխատությունը բովանդակությամբ նույնպես բացառիկ է ինչպես Հայաստանում, այնպես էլ հայկական սփյուռքում:

«Սեւ գրքի» արժեքը, սակայն, սոսկ բացառիկությամբ չի պայմանավորվում: Աշխարհին ներկայացնելու եւ ճիշտ օգտագործելու դեպքում այս բացառիկ աշխատությունը միաժամանակ դառնում է թուրքական ժխտողականությունը չեզոքացնելու արդյունավետ միջոց: Թեեւ «Սեւ գիրքը» Հայոց ցեղասպանության հարցին նվիրված ուսումնասիրություն չէ, սակայն թուրքական ժխտողականության սնանկությունը օտարերկրացի գործիչների ցեղասպանության մասին անմիջական վկայություններով բացահայտելու հարցում անհամեմատ ազդեցիկ է լինելու, քան բազմահատոր ուսումնասիրությունները: Այս աշխատությունը հրատարակության պատրաստելիս Ալբերտ Խոյանը լուրջ ներդրում է արել ժխտողականության դեմ պայքարին: «Սեւ գիրքը», բացի բացառիկությունից, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում ունի նաեւ պրակտիկ քաղաքական նշանակություն:

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**
**Պատմական գիտությունների թեկնածու**

# «Ագռավի խնամին կաչաղակը կլինի»

Այսպես է ասում ղարաբաղցին, երբ մեկն իր ստին սուտ վկա է բերում: Թուրք «պատմաբան» Մեհմեդ Փերինչեկը գիրք է հրապարակել: Այն ունի «Հայկական հարցը ռուսաստանյան պետական արխիվի 120 փաստաթղթերում» վերնագիրը: Բնականաբար, «գիտական» այդ նորույթը չէր կարող դուրս մնալ «կաչաղակի» ուշադրությունից: Եվ ահա «Բակինսկի ռաբոչի» թերթը Փերինչեկի հետ մի ծավալուն հարցազրույց է տպագրել:

Երկուսով իրար լրացնելով, լրագրողն ու թուրք «պատմաբանը» ճգնում են ապացուցել, որ «հայերը Կովկասում եւ Թուրքիայում մուսուլմանների զանգվածային ջարդեր են կազմակերպել»: Եվ իբր այդ մասին նյութեր «գտնվել են» ռուսաստանյան պետական արխիվներում: Փերինչեկը նույնիսկ պնդում է, որ «ռուսաստանյան դատարանները հազարավոր հայերի են մահվան դատապարտել՝ Առաջին համաշխարհային պատերազմում թուրք խաղաղ բնակչության դեմ նրանց գործած հանցանքների համար», սակայն որեւէ «դատվածի» անուն այդպես էլ չի նշում:

Նրա վկայակոչած միակ «փաստաթուղթը» ռուսական բանակի գեներալ Բոլխովիտինովի «զեկուցագիրն» է: Ընդ որում, մեկ անգամ Փերինչեկն ասում է, որ գեներալն այդ «զեկուցագիրը» ղրկել է Կովկասի փոխարքային», իսկ քիչ հետո, մոռանալով դա, պաթետիկ բացականչում, թե «Բոլխովիտինովը հայերի ոճրագործությունների մասին զեկուցել է իր թագավորին»:

Թե ինչ է այդ «զեկուցագիրը», առհասարակ, գոյություն ունի՞, թե՞ ոչ՝ կարող են պարզել պատմաբանները՝ ուսումնասիրելով, ինչպես թուրք «պատմաբանն» է ասում, մերձմոսկովյան Պոդոլսկ քաղաքում պահվող «ռուսաստանյան պետական արխիվները»: Մեզ հաջողվեց պարզել, թե ով է եղել Փերինչեկի «սկզբնաղբյուր» Բոլխովիտինովը:

Նա գեներալ-մայորի զինվորական կոչում ստացել է 1914 թ. հունիսի 21-ին եւ նշանակվել Կովկասյան զինվորական օկրուգի գեներալ-կվարտիրմեյստեր: Ռուսական բանակում դա «շտաբի պետի՝ զորքերի տեղաշարժի, տեղավորման եւ զորահավաքի հարցերով օգնականի» պաշտոն էր: Ճիշտ է, գեներալ Բոլխովիտինովը 1915թ. հունվարի 31-ին նշանակվել է Կովկասյան բանակի շտաբի պետի պաշտոնակատար, սակայն ռազմաճակատի հրամանատար գեներալ Յուդենիչը նրան արգելել է գործել ճակատային գծում, եւ նա «մնացել է փոխարքայի մոտ»: Այսինքն՝ Բոլխովիտինովը մշտապես գտնվել է Թիֆլիսում: Այն եւս՝ մինչեւ 1917 թ. հունիսի 9, երբ ուղարկվել է արեւմտյան ռազմաճակատ՝ Պետրոգրադի զինվորական օկրուգ:

1918 թ. Բոլխովիտինովը մտել է Բանվորագյուղացիական կարմիր բանակ, օգոստոսին՝ գերվել Դենիկինի կողմից: Ռազմադաշտային դատարանը նրան դատապարտել է մահվան, սակայն Դենիկինն այդ պատիժը փոխել է լրիվ աստիճանազրկումով: Նախկին գեներալը որոշ ժամանակ որպես շարքային զինվոր կռվել է բոլշեւիկյան զորքերի դեմ, ինչի համար Դենիկինը վերականգնել է նրա զինվորական կոչումը: Հյուսիսային Կովկասից նահանջող դենիկինյան զորքերի հետ անցել է Ղրիմ, այնտեղից՝ Թուրքիա, որտեղ մի քանի ամիս ներկալված ապրել է Գելիբոլիում: Բոլխովիտինովը Թուրքիայից անցել է Բուլղարիա, որտեղ էլ կարճ ժամանակ անց ինքնասպանությամբ վերջ է տվել կյանքին:

Ըստ ռուսական էմիգրանտների շրջանում իշխած կարծիքի, ինքնասպանության պատճառ են եղել բոլշեւիկյան բանակի հյուսիսկովկասյան խմբավորման հեղափոխական շտաբի նախկին պետ Վլադիմիր Չերնովի հրապարակումներն այն մասին, որ, գտնվելով Դենիկինի բանակում, Բոլխովիտինովը «մնացել է Չեկայի (Արտակարգ հանձնաժողովի-Վ.Ա.) գործակալ եւ մեր բոլոր հանձնարարությունները կատարել է ճիշտ եւ անառարկելիորեն»:

Մենք այսքան մանրամասն անդրադարձանք Բոլխովիտինովի կենսագրությանը, որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի, թե ինչ մակարդակի եւ, որ ավելի կարեւոր է, բարոյականության տեր մարդու «զեկուցագիրն» է հիմք ընդունել Մեհմեդ Փերինչեկը: Ավելին, ոչ մի երաշխիք չկա, որ Բոլխովիտինովն «իր թագավորին հղած զեկուցագիրը» գրել է այն ժամանակ, երբ փաստացի գերության մեջ է եղել Թուրքիայում: Ամեն դեպքում ակնհայտ է, որ նա ռուս- թուրքական ճակատի առաջավոր գծերում երբեւէ չի եղել, ուստի չէր կարող «տեսնել հայ կամավորական ջոկատների գործած վայրագությունները»:

Պարզ խղճահարություն են հարուցում Փերինչիկի «հղումները» խորհրդային շրջանի «ուսումնասիրողներին»: Չէ՞ որ ակնհայտ է, որ խորհրդային գաղափարախոսությունը խնդիր էր դրել ամեն կերպ վարկաբեկել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն ու նրա հերոսներին: Այն, ինչ գրվել է այդ շրջանում, բայց հատկապես՝ անցյալ դարի 20-30-50-ական թվականներին, որեւէ լուրջ պատմաբան չի կարող այսօր ընդունել: Մինչդեռ թուրք «պատմաբանը», համենայն դեպս՝ ադրբեջանական թերթին տված հարցազրույցում, միայն այդպիսի աղբյուրներ է վկայակոչում:

Մի խոսքով, դա թուրք-ադրբեջանական կատարյալ համերաշխության եւ իրականությունը համատեղ նենգափոխելու եւս մի դրսեւորում է, որն ավարտվում է բացահայտ խարդավանքով, թե «հայերն այժմ մեղադրում են Ռուսաստանին, որ մեղսակից է ցեղասպանությանը», որն, ի դեպ, հուշում է, թե ինչու հատկապես «ռուսաստանյան պետական արխիվներում» է նա կատարել իր «հայտնագործությունները»:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# «Կասկած մի ունեցեք»

## Ըստ Յավուզ Բայդարի` Թուրքիայից ամեն տեսակի անակնկալ կարելի է սպասել, անգամ ԼՂ համատեքստում

Հայոց ցեղասպանության համատեքստում վերջին երկու տարում Թուրքիայում տեղի ունեցող արարողությունները որպես փոփոխություն զարգացող շարժում են: Այսպիսին է թուրքական «Սաբահ» թերթի օմբուդսմեն **Յավուզ**



*Յավուզ Բայդար*

**Բայդարի** գնահատականը: **«Ազգի»** հարցին, թե որքանով են այդ փոփոխությունները արտահայտում թուրք հասարակության իրական տրամադրությունները, Բայդարը պարզաբանում է. «Կասկած մի ունեցեք, սա շատ մեծ փոփոխություն է, որ տեղի է ունենում Թուրքիայում: Սա ինքնըստինքյան զարգացող շարժում է»:

Ըստ ներքաղաքական եւ արտաքին քաղաքական իրավիճակներին մշտապես հետեւող մասնագետի` այս շարժման առնչությամբ պետության միակ պատասխանատվությունը ապրիլ-24-յան թուրքական միջոցառումների անցկացման անվտանգությունն ապահովելն է: «Պետության կողմից ճանապարհ ցույց տալու միտում չկա», վստահեցնում է Յավուզ Բայդարը: Նրա խոսքերով, Թուրքիայում հայկական հարցի առնչությամբ տեղի ունեցողը պատմական զարգացում է: «Առաջին միջոցառումներն անցյալ տարի եղան Ստամբուլում ու Անկարայում, այս տարի արդեն դրանում ներգրավվել էր հինգ քաղաք, եւ սա ծավալվելով շարունակվելու է»:

Ըստ Բայդարի, այս միջոցառումների նախաձեռնողներն ու մասնակիցները թուրքական հասարակության համառ հատվածն են ներկայացնում: Նրա ներկայացմամբ, «մի կողմից, սա զարգանալու է, մյուս կողմից` այլ ծրագրեր են նախագծվում, մասնավորապես, հասարակությանն ու պետությանը նախապատրաստելով 2015-ին»:

«Հայկական հարցի առավել բաց քննարկումը, ապրիլ-24-յան այսպիսի արարողությունները դանդաղ գործընթաց են, բայց նույն կերպ դանդաղ, ինչպես այլ սոցիալական գործընթացները», ասում է Բայդարը: Իսկ թե ինչն է այս գործընթացների հիմնական դրդապատճառը` կառավարամետ թերթի օմբուդսմենը նշում է, որ 2002-ից Թուրքիայում «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանության գալով առավել բաց քննարկումներ են ընթանում երկրում, ճիշտ այնպես, ինչպես դա տեղի ունեցավ Գորբաչովյան «գլասնոստի» հայտարարման պայմաններում:

### Հունիսի 12-ի «հայկական» հեռանկարը

Թուրքիայում այս կիրակի սպասվող խորհրդարանական ընտրությունների համատեքստում արդեն Յավուզ Բայդարը հետընտրական զարգացումներում հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման առումով առանձնակի փոփոխություններ չի ակնկալում: «Անկախ մնացյալ գործոններից եւ ուժերից` այդ հարցում կա եւս մեկ հանգամանք` Ադրբեջանը: «Արդարություն եւ բարգավաճում» իշխող կուսակցության առաջնորդ, Թուրքիայի վարչապետ Էրդողանը դեմ չէ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը, բայց էներգետիկ գործոնների պատճառով նա չի կարող մի կողմ թողնել Ադրբեջանը»:

Թուրքական խորհրդարանական ընտրությունների կուսակցական նախնական ցուցակներում հայ թեկնածուների` այդուհետեւ այդ ցուցակներից դուրս մնալու հանգամանքը պարզաբանելու առնչությամբ **«Ազգի»** հարցին Յավուզ Բայդարը ամենապարզ տեքստով նշում է, որ, նախ, այդ հարցը կապված է գումարի հետ: «Հայերի մեջ կային մարդիկ, որ ցանկանում էին թեկնածուներ լինել, բայց Ստամբուլում այդ առումով մեծ մրցակցություն կար: Թեկնածու դառնալու ցանկություն ունեին նաեւ, օրինակ, ռումինները, բայց նրանց թեկնածությունները եւս չհաստատվեցին», պարզաբանում է Բայդարը:

Մյուս կողմից, Բայդարը ստեղծված իրավիճակի մեկ այլ բացատրություն է նշում, որ այլոց կարծիք է որակում: Մասնավորապես, քանի որ այս ընտրություններում իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը ցանկանում է տիրանալ «Ազգայնական շարժում» կուսակցության ձայներին` իր հետագա նոր սահմանադրության անցկացման հարցերը խորհրդարանում լուծելու համար, վարչապետ Էրդողանն ուղղակի չի գնացել հայ թեկնածուներին իր կուսակցության ցուցակներով որպես թեկնածու ունենալու քայլին` չցանկանալով կորցնել ազգայնականների ձայները:

Ամեն դեպքում, մի քանի օրից տեղի ունենալիք խորհրդարանական ընտրությունների որեւէ արդյունքի դեպքում, ըստ Բայդարի, Թուրքիայի արտաքին քաղաքականության փոփոխություններ չեն լինի, հատկապես Հայաստանի եւ Կիպրոսի հարցերում: Վերջինի պարագայում, ըստ Բայդարի, պետք է վերապահում անել ու սպասել, թե ինչ կորոշի Եվրոմիությունը աշնանը: «Լեռնային Ղարաբաղի հարցը մի տեսակ կողպված է, բայց չպետք է մոռանալ, որ սա Թուրքիան է, եւ ամեն անակնկալ կարելի է սպասել»:

### Սպասվող ընտրությունները` ճակատագրական

Թուրքիայում սպասվող հունիսի 12-ի խորհրդարանական ընտրությունները, Յավուզ Բայդարի համոզմամբ, ճակատագրական են, քանի որ ԱԲԿ-ի իշխանության գալուց ի վեր սոցիալական ու քաղաքական առումով բավականին բարեփոխումներ են եղել, եւ այսօր հարց է` կամ այն ամենը առաջ կգնա նոր թափով, կամ լուրջ խնդիրներ կառաջանան:




*Թուրքական կոմունիստական կուսակցությունը իր քարոզարշավն է անցկացնում Իստիկլալում:*

Հիմնական ուժ հանդիսացող ԱԲԿ-ն եւ հիմնական ընդդիմադիր մնացած Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը կարող են խորհրդարանում հայտնվել առանց Ազգայնական շարժում կուսակցության, որը, ըստ որոշ գնահատականների, հայտնվել է 9-11 տոկոս ձայն ստանալու սահմանագծին, այն դեպքում, երբ թուրքական խորհրդարանի ընտրական շեմը 10 տոկոսն է: Եվ եթե, ըստ Բայդարի, այդ սցենարն իրականություն դառնա, նոր խորհրդարանում կավելանա նաեւ քուրդ պատգամավորների թիվը:

«Թուրքիան ներկայումս գտնվում է բաց արտահայտվելու ընթացքի մեջ, այնպես որ քրդերը այնպես բաց են խոսում, ինչպես երբեք պատմության մեջ, դրա համար էլ նաեւ հայտնվել են ծայրահեղական դիրքերում: Քրդերը քայլ առ քայլ գնում են ինքնավար դրսեւորումների», ասում է Բայդարը:

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստամբուլ, Թուրքիա**

**Հ. Գ. Նյութը պատրաստվել է Երեւանի մամուլի ակումբի, Եվրասիա համագործակցության հիմնադրամի եւ թուրքական «GPOT» կենտրոնի կազմակերպած նախընտրական լրագրողական փոխանակման ծրագրի շնորհիվ:**

---

*ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ*

# ՆԱՏՕ-ն վերսկսել է Տրիպոլիի ռմբակոծությունը

## Քադդաֆին խոստանում է մնալ երկրում

**Հունիսի 7-ին եւ 8-ի առավոտյան ՆԱՏՕ-ի օդուժը վերսկսել է Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիի ռմբակոծումները: Թիրախ է դարձել Մուամմար Քադդաֆիի նստավայրի շրջանը, հաղորդում է Ֆրանսպրեսը:**

**Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, երեկ հասցվել է առնվազն 10 օդային հարված: Վնասված օբյեկտների կամ մարդկային զոհերի մասին չի հաղորդվում:**

**Նախօրեին ՆԱՏՕ-ի ռազմօդանավերը մոտ 60 ռումբ էին գցել Տրիպոլիի վրա: Լիբիայի իշխանությունների տվյալներով, զոհվել էր 31 մարդ (Քադդաֆիի նստավայրի պահապաններ եւ խաղաղ բնակիչներ): Նաեւ հաղորդվում է տասնյակ վիրավորների մասին:**

**Օդային գրոհից հետո Լիբիայի պետական հեռուստատեսությամբ ցուցադրվել էր Մուամմար Քադդաֆիի տեսագրված ելույթը: Նա հայտարարել էր, թե Արեւմուտքը երբեք չի կարողանա հաղթել լիբիացիներին, ինչպես նաեւ իր կողմնակիցներին կոչ էր արել գալ իր նստավայրի մոտ: 9-րոպեանոց ելույթում Քադդաֆին խոստացել էր մնալ երկրում` «կենդանի թե մեռած»: Նրա խոսքերով, «միլիոն անգամ լավ է դառնալ նահատակներ, քան հանձնվել թշնամուն»:**

**Ի դեպ, հունիսի 7-ին լրացավ Քադդաֆիի 69-ամյակը: Ֆրանսպրեսը նշում է, որ նրա նստավայրի համալիրի կառույցների մեծ մասն արդեն ավերված է ՆԱՏՕ-ի ռմբակոծումների ու հրթիռակոծումների հետեւանքով:**

**Նույն գործակալությունը հաղորդում է, որ հունիսի 7-ին Լիբիայի կառավարությունից հեռացել եւ ապստամբների կողմն է անցել աշխատանքի նախարար Ամին Մանֆուրը: Նա համապատասխան հայտարարություն է արել Ժնեւում` Աշխատանքի միջազգային կազմակերպության հերթական ամենամյա նիստում:**

**Ավելի վաղ ընդդիմության կողմն էին անցել Լիբիայի նավթարդյունաբերության, արդարադատության, ներքին գործերի եւ արտաքին գործերի նախարարները, ինչպես նաեւ մի շարք բարձրաստիճան զինվորականներ եւ դիվանագետներ:**

**Իտալիայի կառավարությունը պաշտոնապես հայտարարել է, որ բանակցում է Քադդաֆիի մերձավորների հետ, որպեսզի նրանք հեռանան Լիբիայի պետական կառույցներից:**

# Ջիսր ալ Շուգուրի 122 բնակիչներ ապաստանել են Թուրքիայում

## Դա ամենեւին էլ քաղաքից բնակչության համատարած փախուստ չի ենթադրում

**Նախորդ օրը Սիրիայի Ջիսր ալ Շուգուր քաղաքում, որը սահմանակից է Թուրքիային, ծուղակի մեջ ընկած անվտանգության ուժերի 120 մարտիկներ սպանվել էին: Ըստ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցների, սպանությունը տեղի է ունեցել նախագահ Ասադի դեմ ընդվզող բնակիչների հետ բախումների հետեւանքով, իսկ պաշտոնական տվյալների համաձայն, դա կազմակերպել են քաղաք ներթափանցած օտարերկրացի վարձկանները: Թե ինչպես է հաջողվում Ջիսր ալ Շուգուրի թեկուզ ըմբոստացած հասարակ բնակչությանը ծուղակի մեջ գցել անվտանգության ուժերին, առավել եւս ոչնչացնել այդ ուժերի 120 մարտիկներին, երբ դա մտնում է հատուկ նշանակության գրոհայինների գործառության մեջ, ըստ երեւույթին գիտեն օտարերկրացի վարձկաններին Սիրիա գործուղող միջազգային ուժերը:**

**Համենայն դեպս, Ջիսր ալ Շուգուրի 200 բնակիչներ, լքելով քաղաքը, շարժվել են դեպի Թուրքիայի սահմանը, որոնցից 122-ը ապաստան են խնդրել թուրքական իշխանություններից եւ տեղափոխվել Հաթայի (Ալեքսանդրետի սանջակ) մոտակայքում տեղակայված վրանածամբարում: Այդ մասին երեկ նշել է թուրքական «Դունիա բուլթենի» կայքէջը: Որքան էլ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները փորձեն Ջիսր ալ Շուգուրի բնակիչներից 200-ի փախուստին համատարած բնույթ հաղորդել եւ դա պայմանավորել կառավարական զորքերի մոտալուտ հաշվեհարդարով, ապատեղեկատվությունը ակնհայտ է:**

**Միանգամայն հնարավոր է, որ փախուստի համար պատճառ լինի ոչ թե հաշվեհարդարը, այլ օտարերկրացի վարձկանների հետ կառավարական զորքերի բախումներից բխող մտավախությունը, այլապես փախստականների թիվը 200-ով չէր սահմանափակվի: Խնդիրը, սակայն, ապատեղեկատվությունը չէ, այլ դրա իբրեւ ճշմարտություն մատուցումն է աշխարհին, որը տեղեկատվության աղտոտվածություն է ենթադրում:**

**Հ. ՉԱՔՐՅԱՆ**

# Լենինն ունի նաեւ հրեական արմատներ

Մոսկվայի Պատմության թանգարանում առաջին անգամ ցուցադրվում են ՊԱԿ-ի արխիվի վավերագրեր, որոնք տեղեկություններ են տալիս Լենինի էթնիկական արմատների մասին: Մասնավորապես պարզվում է, որ նրա մայրական պապը եղել է քրիստոնեություն ընդունած հրեա: Այս կապակցությամբ Ժնեւի Le Temps թերթը գրում է. «Տվյալ տեղեկության մեջ զավեշտական ոչինչ չկա այն երկրի համար, որտեղ պետական հակահրեականությունը տասնամյակներ շարունակ սովորական բան էր»:

Գլխավոր ցուցանմուշներից մեկը ի չիք է դարձնում այն առասպելը, թե Լենինի նախնիների մեջ եղել են միայն ռուսներ, գերմանացիներ եւ շվեդներ: Խոսքը նրա ավագ քույր Աննա Ուլյանովայի` Ստալինին գրած նամակի մասին է, որտեղ նա հայտնում է, որ իրենց մայրական պապը աղքատ հրեական ընտանիքից էր` Ժիտոմիրում ծնված Մոյիսեյ Բլանկի որդին: Նա ընդգծում է, որ իր եղբայրը «միշտ բարձր կարծիք է ունեցել հրեաների մասին», եւ դատապարտում է ծավալված հակահրեականության ալիքը, Ստալինին կոչ անելով պատմել Լենինի հրեական արմատների մասին: Իր պատասխանի մեջ Ստալինը Աննա Ուլյանովային հրամայեց լռել, իսկ մի քանի տարի անց բնաջնջեց հեղափոխության բոլոր հրեա առաջնորդներին: Նա նաեւ պատրաստվում էր Սիբիր աքսորել խորհրդային բոլոր հրեաներին, բայց մահացավ 1953-ին:

Թերթի բնորոշմամբ, «Լենինին մեծարում է ռուսաստանցի կոմունիստների առավել արմատական խավը, որը կարոտով է հիշում խորհրդային վարչակարգը եւ դավանում է ոչ թե ինտերնացիոնալիզմ, այլ հակահրեականությամբ տոգորված ստալինիզմ»:

Ցուցահանդեսը դրական դեր կունենա թերեւս այն առումով, որ կպակասի Լենինի մոլի հետեւորդների թիվը: «Լենինի հրեական արմատները գուցե մոտեցնեն նրա մումիայի թաղման պահը կամ մարդկանց ստիպեն Դավթի աստղերով զարդարել առաջնորդի անհամար հուշարձանները, որոնց այլեւս ոչ ոք ուշադրություն չի դարձնում», եզրափակում է թերթը:

**Պ. Ք.**

ԱԶԳ

# Մշակոյթ

# «Վէրք Հայաստանի. ողբ հայրենասէրի» Վէպի արեւմտահայերէնի վերածուած գիրքի շնորհահանդէս


*Արմենակ Եղիայան*

Նախաձեռնութեամբ Բեյրութի ՀԱՅՈԳԻ մատենաշարին եւ համատեղ կազմակերպութեամբ Համազգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչատան, «Ազդակ» օրաթերթի եւ ՀԱՅՈԳԻ մատենաշարին, յունիսի 6-ին, «Ազդակ»ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ Խաչատուր Աբովեանի «Վէրք Հայաստանի. ողբ Հայրենասէրի» վէպի արեւմտահայերէնի վերածուած գիրքին շնորհահանդէսը:

Բացման խօսքը արտասանեց **Յակոբ Հաւաթեան**, որ դիտել տուաւ, որ 12 տարուան ընդհատումէ ետք, ՀԱՅՈԳԻ մատենաշարը դարձեալ ինքզինք կը դնէ հայ գիրի ու գրականութեան տարածման եւ հարստացման պատնէշի առաջին դիրքերուն վրայ, այս անգամ եզակի ու պատգամող նախաձեռնութեամբ մը Խաչատուր Աբովեանի «Վէրք Հայաստանի» գիրքի արեւմտահայերէն տարբերակը վերահրատարակելով:

ՀԱՅՈԳԻ մատենաշարի նախաձեռնող, հիմնադիր եւ պատասխանատու **Խաժակ Գալուստեան** ի տես այն երեւոյթին, որ ընթերցանութեան նահանջը կը սպառնայ հայ լեզուին ու մշակոյթին, յանդուգն քայլով մը կ՛որոշէ այս գիրքը հրատարակ դնել 2500 թղթակազմ ու լաթակազմ տպաքանակով», հաստատեց Հաւաթեան: Այս առիթով ան «Ազդակ»ի ու Համազգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչատան անունով յարգանքի զգացումներ արտայայտեց հանդէպ ՀԱՅՈԳԻ մատենաշարի խորհուրդին մաս կազմած եւ նորահաս սերունդներու հայեցի ու գաղափարական կազմաւորման մէջ իրենց վաւերական դրոշմը ձգած երկու նուիրեալներու՝ վաստակաւոր մանկավարժ, դաստիարակ, տնօրէն Մանուշակ Պոյաճեանին եւ խոհուն մտաւորական, հրապարակագիր, հայ կեանքին մէջ գաղափարական հարուստ շտեմարան կառուցած Վազգէն Էթիմեզեանին:

Իր խօսքի աւարտին Յ. Հաւաթեան յայտարարեց, որ ձեռնարկը կազմակերպած երեք կառոյցները համագործակցաբար կը յայտարարեն երեք դասակարգումներու մրցանք, որ տեղի պիտի ունենայ 2011-12 կրթական տարեշրջանի սկիզբը՝ տուեալ տարեշրջանի 8-րդ եւ 9-րդ դասարաններու, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարաններու աշակերտներուն, նաեւ ընթերցասէրներուն համար: Երեք խումբերու պարագային յաղթողները պիտի ստանան նիւթական պարգեւներ:

Օրուան առաջին բանախօսն էր գիրքի խմբագիր եւ արեւմտահայերէնի վերածումը կատարած տոքթ. **Արմենակ Եղիայեան**, որ խօսեցաւ տարուած աշխատանքին դիմաց ցցուած դժուարութիւններուն մասին: Ան նախ նշեց, որ թէեւ Խաչատուր Աբովեանի անձին ու ճակատագիրին նկատմամբ մեծ համարում ունեցած է հայութիւնը, սակայն անոր գործերը ընթերցելը դժուար եղած է, որովհետեւ անոր լեզուն մատչելի չէ եղած արդի արեւմտահայերէն օգտագործողներուն: Ա. Եղիայեան դիտել տուաւ, որ գիրքի արեւմտահայերէն վերածումին ընթացքին հարկ եղած է թարգմանել 2000 բառեր, որոնցմէ ոմանք ոսկեդարեան բառեր եղած են ու ժամանակի ընթացքին աղաւաղուած են այնքան, որ այսօր ամբողջովին անհասկնալի են, ուրիշ բառերու խումբ մը նուազ աղաւաղումներ կրած է, սակայն մատչելի չէ, այլ խումբ մը բառեր բարբառային են, իսկ անհասկնալի բառերուն ճնշիչ մեծամասնութիւնը թրքերէն բառերն են, կան նաեւ պարսկերէն բառեր:

Ան նաեւ անդրադարձաւ քերականական օրէնքներու եւ երեւոյթներու, դարձուածքաբանութիւններու, որոնք ներկայի դրութեամբ անհասկնալի կը թուին, որովհետեւ անոնք օրին մշակուած եւ գործածուած են տուեալ հաւաքականութեան համար, անոր մտածելակերպով եւ կանոններով:


*Հակոբ Հավաթյան*

Իր խօսքը եզրափակելով ան կոչ ուղղեց՝ քաջալերելու ընթերցանութիւնը յատկապէս աշակերտներուն մօտ, որովհետեւ դպրոցական տարիներուն է, որ մարդ ամէնէն աւելի կը կապուի գիրքին, որ մեծ դերակատարութիւն ունի ազգային դիմագիծի պահպանման մէջ: Վերջին բաժինով ան շնորհակալութիւն յայտնեց այս աշխատանքին նախաձեռնողին, նաեւ բոլոր անոնց, որոնք իրենց ներդրումը ունեցան նման ծրագիրի մը իրականացման իմաստով:

Ապա **Հեղնար Եղիայեան** ընթերցեց հատուածներ արեւմտահայերէնի վերածուած «Վէրք Հայաստանի. ողբ հայրենասէրի» գիրքէն:

Երկրորդ բանախօսն էր հայրենի գրականագէտ, արուեստաբան փրոֆ. **Երուանդ Տէր Խաչատուրեան**, որ շեշտը դրաւ նման գիրք մը արեւմտահայ ընթերցողին մատչելի դարձնելու կարեւորութեան վրայ՝ հաստատելով, որ նման նախաձեռնութիւն մը իսկապէս պատմական է, նաեւ պատմական է շնորհահանդէսը: Անոր համաձայն, այսպիսով ժամանակակից մարդը հաղորդակցութեան մէջ կը մտնէ մեր մեծ դէմքերէն Խաչատուր Աբովեանի հետ, որ իր կեանքով ու ճակատագիրով խորհրդանիշն է հայ ժողովուրդի ճակատագիրին, եւ որ օրին յատուկ լեզու ստեղծած է իր ապրած ժամանակաշրջանը ներկայացնելու, նաեւ այդ գրականութիւնը այն օրերուն ապրող մարդոց մատչելի ու հարազատ դարձնելու համար:


*Երվանդ Տեր-Խաչատրյան*

Ե. Տէր Խաչատուրեանի համաձայն, Խ. Աբովեան այս գործը իր լրումին հասցնելէ ետք յայտարարած է, որ ինք իր գերագոյն նպատակը իրագործած է՝ հիմքը դնելով հայ գրականութեան մէջ շարունակուող շառաւիղի մը: Հայրենի գրականագէտը հաստատեց, որ այս գիրքը լոկ վէպ մը չէ, այլ յատուկ իմաստ, արժէք եւ խորհուրդ ունի, որովհետեւ նիւթը ժողովուրդն է, կեանքը անոր կեանքն է, հասկնալի է ժողովուրդի բոլոր խաւերուն եւ հերոսները այդ հաւաքականութեան կը պատկանին: Անոր համաձայն, «Վէրք Հայաստանի. ողբ հայրենասէրի» գործով Աբովեան շառաչող տարերք ստեղծած է՝ ներառելով մեր կեանքի անցեալի պատմութիւնը եւ հասնելով մինչեւ ապագայ: Գիրքը լուսաւոր ջահի նման վառեցաւ եւ մինչեւ այսօր կը շարունակէ լուսաւորել, անոր հետ առնչուելով մարդ կը մաքրուի եւ գիրքի ընթերցման աւարտին ան ինքնաբերաբար ուրիշ մէկը կը դառնայ, յայտնեց Ե. Խաչատուրեան՝ հաստատելով, որ այս գիրքը արեւմտահայերէնի վերածուած ամբողջական առաջին հրատարակութիւնն է: Իր խօսքի աւարտին ան շնորհաւորեց տարուած աշխատանքը:

Ձեռնարկէն ետք տոքթ. Արմենակ Եղիայեան եւ փրոֆ. Երուանդ Տէր Խաչատուրեան մակագրեցին գիրքէն օրինակներ:



ՄԱՀՎԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

# Վիլյամ Սարոյանին նվիրված միջոցառումներ Հունաստանում

Հունաստանում շարունակվում են Հայաստանի դեսպանության եւ Հունահայկական հետազոտությունների կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ, ինչպես նաեւ Հույն-ամերիկյան միության հետ գործակցությամբ անցկացվող՝ ամերիկահայ աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանի մահվան 30-րդ տարելիցին նվիրված մշակութային միջոցառումները: Դրանց նպատակն է մեծ գրողի ստեղծած գեղարվեստական եւ մարդասիրական անանց արժեքների միջոցով Հունաստանի հայկական եւ ամերիկյան համայնքների, ինչպես նաեւ հույն հասարակայնության միջեւ մշակութային կամրջի ամրապնդումը:

Ապրիլի 13-ին կայացած անդրանիկ միջոցառման մասին իր էջերում ընդարձակ տեղեկատվություն է զետեղել Աթենքի «Դիվանագիտական կյանք» ամսագիրը:

Սարոյանական երկրորդ միջոցառումը տեղի ունեցավ Հույն-ամերիկյան միության դահլիճում եւ նվիրված էր ստեղծագործական կենսագրության տարբեր տարիներին Սարոյանի կողմից արված մատիտանկարներին, էսքիզներին, ինքնապատկերներին, խճանկարներին եւ այլ աշխատանքների: Հունահայկական հետազոտությունների կենտրոնի ներկայացուցիչ Հովսեփ Քասեսյանի բացման խոսքից հետո Սարոյանի գունաշխարհի ու գծապատկերների մասին հանգամանալից դասախոսությամբ հանդես եկավ Սալոնիկի Արիստոտելյան համալսարանի պրոֆեսոր Դիմիտրիս Զուրուդիսը, որի խոսքն ուղեկցվում էր սարոյանական աշխատանքների լուսապատկերների ցուցադրությամբ եւ դրանց խորհրդանշական իմաստի հետաքրքրական մեկնաբանություններով:

Երեկոյին ներկա էին Հունաստանի հայ եւ ամերիկյան համայնքների ներկայացուցիչներ, ուսանողներ, լրագրողներ:

Սարոյանական միջոցառումները Հունաստանում շարունակվելու են ամբողջ տարվա ընթացքում:

# Գավառում մեկնարկեց ալտի ու թավջութակի փառատոնը

«**Ազգն**» իր ընթերցողներին տեղեկացրել էր հունիսի 7-26-ը Հենրիկ եւ Գերնսի Թալալյանների անվան ալտի եւ թավջութակի 2-րդ հանրապետական փառատոնի մասին:

Փառատոնը մեկնարկեց Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում: Մարզկենտրոնում նման կարեւոր փառատոնի հանդիսավոր բացումը ոգեւորել էր եւ մարզի ղեկավարությանը, եւ ազգաբնակչությանը: 1985 թ. Գավառի երաժշտական դպրոցը անվանակոչվել է ՀԽՍՀ ժող. արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Հենրիկ Թալալյանի անունով եւ հենց այդ երաժշտական դպրոցի կամարների տակ ջերմորեն ընդունեցին փառատոնի մասնակիցներին թավջութակահար, փառատոնի գեղղեկ Արամ Թալալյանի գլխավորությամբ: Ամենուր ուրախ եռուզեռ էր, տոնական տրամադրություն: Երեկոյան «Գեղամա» հեռուստաընկերության համերգային սրահում առաջին անգամ ուղիղ եթեր հեռարձակվեց «Հենրիկ եւ Գերնսի Թալալյանների անվան ալտի եւ թավջութակի» 2-րդ հանրապետական փառատոնը: Մոտ երկու ժամ տեւած փառատոնի հանդիսավոր բացման համերգը ունկնդրելու հնարավորություն ունեցավ Գեղարքունիքի մարզի ողջ բնակչությունը, Գավառի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանի ջանքերով:



Փառատոնին իրենց ողջույնի ուղերձներն էին հղել ու կարեւորել մարզում նման եզակի նախաձեռնության համար մարզպետ Նվեր Պողոսյանը, Գավառի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանը: Ներկաներին ու փառատոնին բարի երթ մաղթեց ու տերունական աղոթքով իր օրհնությունը բերեց Գեղարքունյաց թեմի առաջնորդ Մարկոս եպս. Միքայելյանը: Հյուրընկալ մարզին շնորհակալական խոսք հղեց «Ազգային պատկերասրահ» մշակութային հիմնադրամի նախագահ Մարիամ Շահինյանը: Փառատոնը ողջունեցին ու կարեւորեցին նաեւ Գերնսի Թալալյանի տիկինը՝ Էմմա Թալալյանը, Ավետ Տերտերյանի որդին՝ Երեւանի կոնսերվատորիայի պրոռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Տերտերյանը: Իսկ փառատոնի մեկնարկը ազդարարելու պատիվը տրվեց ամենակրտսեր թավջութակահար (9-ամյա) Միքայել Գրիգորյանին, որից հետո ելույթներ ունեցան Տաթեւիկ Մեսրոպյանը, Հայկ Սուքիասյանը (թավջութակ), Հայկազ Կարապետյանը, Յանա Դուրյանը (ալտ) եւ դաշնակահարներ Լուսինե Հակոբյանն ու Ջուլիետա Վարդանյանը:

Համերգի երկրորդ մասում իր կատարողական արվեստով փայլեց Ալտի եւ թավջութակի անսամբլը՝ դիրիժոր Արամ Թալալյանի գլխավորությամբ: Համերգից հետո «**Ազգը**» զրուցեց մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Գարիկ Բադալյանի հետ ու տեղեկացավ, որ փառատոնը մեծ հետաքրքրություն է առաջացրել մարզում, հատկապես ալտ ու թավջութակ գործիքների հանդեպ, որոնք չկան մարզում, քանզի չկա նաեւ մասնագետ: Մարզում գործում են 7 երաժշտական, 12 արվեստի ու գեղարվեստի դպրոցներ, սակայն թավջութակի ու ալտի բաժիններ երբեւէ չեն եղել: Այսօր 2000-ից ավելի երեխաներ հաճախում են երաժշտական դպրոցներ եւ հիմնականում սովորում են մարզի բնակչության կողմից պահանջված գործիքներ՝ դհոլ, դուդուկ, զուռնա, կլառնետ, ակորդիոն եւ նաեւ լարային ժողգործիքներ: Եվ պրն Բադալյանը եւ Գավառի կրթության եւ մշակույթի գծով գլխ. մասնագետ Գրիգոր Դաշտոյանը միաձայն շեշտում էին, որ «ուղիղ եթերով նման փառատոն անցկացնելը նոր հեռանկարներ ու զարգացումներ կլինեն եւ գուցե մեզ դիմեն այդ գործիքների վրա նվագել ցանկացողները ու մենք կփորձենք ելքեր գտնել, ինչպես եղավ օրինակ բոլորովին վերջերս դուդուկ գործիքի նկատմամբ»:

Ավելացնենք, որ փառատոնը հունիսի 10-ին կհյուրընկալվի Վանաձորում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Գավառ

# Այսօր մեկնարկեցին Մեքսիկայի մշակույթի օրերը

Հունիսի 9-11-ը Հայաստանում անց են կացվելու Մեքսիկայի մշակույթի օրեր: Այսօր Երեւանի Մոսկվայի տանը Մեքսիկայի մասին պատմող լուսանկարչական ցուցահանդեսով կբացվի մշակույթի օրերի շրջանակներում կազմակերպված միջոցառումների շարքը: Մեքսիկայի մշակույթի օրերի հանդիսավոր բացմանը ներկա կլինի Հայաստանում Մեքսիկայի դեսպան Ալֆրեդո Պերես Բրավոն:

Մ.Մ.

# ՀՀ հավաքականը չի մրցի վրացիների եւ ադրբեջանցիների հետ

Ֆուտբոլի Եվրոպայի 2012-ի ընտրական մրցաշարը դեռեւս չի ավարտվել, սակայն արդեն հուլիսի 30-ին կկայանա 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը: Իսկ ընտրական մրցաշարի մեկնարկը կտրվի 2012-ի սեպտեմբերին:

Հայաստանի ազգային հավաքականը վիճակահանությունից առաջ հայտնվել է բավական բարձր՝ 4-րդ զամբյուղում: Այստեղ են ընդգրկված նաեւ Լիտվայի, Ալբանիայի, Հունգարիայի, Բելառուսի, Վրաստանի, Հյուսիսային Իռլանդիայի, Շոտլանդիայի եւ Լեհաստանի ընտրանիները: Իսկ դա նշանակում է, որ այս թիմերը չեն կարող մեզ մրցակից դառնալ:



ՖՈՏՈԼՈՒՐ

Փոխարենը մեր խմբում կարող են ընդգրկվել 5-րդ եւ 6-րդ զամբյուղներում տեղաբաշխված համեմատաբար ավելի թույլ մրցակիցներ (բացառությամբ Ադրբեջանի): 5-րդ զամբյուղում ընդգրկված են Ավստրիայի, Էստոնիայի, Լատվիայի, Ֆինլանդիայի, Մակեդոնիայի, Մոլդովայի, Կիպրոսի, Ադրբեջանի եւ Ուելսի հավաքականները: 6-րդ զամբյուղում են Իսլանդիան, Լյուքսեմբուրգը, Ֆարերները, Ղազախստանը, Լիխտենշտեյնը, Մալթան, Անդորրան եւ Սան Մարինոն: Իսկ ընտրական խմբերը կգլխավորեն 1-ին զամբյուղում տեղաբաշխված հավաքականները՝ Իսպանիան, Հոլանդիան, Գերմանիան, Անգլիան, Պորտուգալիան, Իտալիան, Խորվաթիան, Նորվեգիան եւ Հունաստանը:

Վիճակահանությամբ եվրոպական 53 երկրների հավաքականները կբաժանվեն 9 խմբի: Դրանցից 8-ում կընդգրկվեն 6-ական հավաքականներ, մեկում՝ 5: Խմբերի հաղթողները եզրափակիչի ուղեգիր կնվաճեն: Իսկ 2-րդ տեղեր զբաղեցրած հավաքականներից 8 լավագույնները անցումային խաղերում կվիճարկեն մնացած 4 ուղեգրերը:

# Ադրբեջանը չի հանդուրժում նույնիսկ ֆուտբոլում կրած պարտությունը

Բերտի Ֆոգտսը, որ Եվրոտեսիլից հետո գերմանական լրատվամիջոցների համար Ադրբեջանի լավագույն PR էր իրականացնում, Բաքվում հունիսի 5-ին կայացած ասուլիսի ժամանակ հարձակման է ենթարկվել: Ըստ գերմանական լրատվամիջոցների, ադրբեջանցի 3 լրագրողներ իրենց թիմի՝ Ղազախստանում կրած պարտությունից հետո դժգոհությունն արտահայտել են ինքնատիպ «զենքով»՝ զուգարանի թղթերն ու մահմեդականների լվացվելու արարողության անբաժան ջրով լի կուժն են գործի դրել: «Մենք քեզ չենք ուզում, տուն վերադարձիր» բարձրաձայնումներին մարզիչն առանց հավասարակշռությունը կորցնելու պատասխանել է, թե դա էլ կարող է անել՝ Բաքու-Ստամբուլ, այնուհետ Գերմանիա վերջին օդանավը դեռ չի մեկնել, կհասցնի: Անակնկալ տհաճ զարգացումը կանխել են իրավապահ մարմինները: Ադրբեջանի ազգային հավաքականի գերմանացի մարզիչն ասել էր, թե հայց է ներկայացրել իրավապահ մարմիններին, իսկ իր փաստաբանի միջոցով հետամուտ կլինի հետագա քայլերին: Ուրբաթ օրը Ղազախստանում Ադրբեջանի հավաքականի 1:2 հաշվով պարտությունից հետո ադրբեջանական մամուլը խիստ քննադատություն է հնչեցրել մարզչի հասցեին, իսկ ARD-ով հունիսի 7-ին ֆուտբոլային խաղը չսկսված՝ մեկնաբանը Ադրբեջանի մասին տեղեկատվական իր տեսանյութը Եվրոտեսիլյան հաղթանակից բերեց-հասցրեց Բաքվի փողոցներ, ուր զրույցի ընթացքում ադրբեջանցիներն իրենց դժգոհությունը հաստատեցին՝ ասելով, թե նրանցից մեծ սպասելիքներ չունեն: «Եթե մեր նախագահի հետ ընկեր չլինեի, վաղուց էի գնացել, ասել էր Ֆոգտսը:

Ֆեդերացիայի «ամենակարող» նախագահ Ռովնագ Աբդուլլաեւը եւ գլխավոր քարտուղար Էլխան Մամմադովը վստահեցրել են, որ արարքը կատարողներին պատասխանատվության կկանչեն: Ֆոգտսը ենթադրում է, թե արարքի հեղինակները լրագրողներ չեն եղել, այլ վարձված անձինք, որոնց ազդեցություն ունեցող հեղինակություններ են վճարել:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՄԵՓՅԱՆ
Գերմանիա

# Ֆարերներն անակնկալ մատուցեցին



Ֆուտբոլի Եվրոպայի 2012-ի ընտրական մրցաշարում կայացան հերթական հանդիպումները: Մեծ անակնկալ մատուցեցին Ֆարերների ֆուտբոլիստները, որոնք սեփական հարկի տակ 2-0 հաշվով պարտության մատնեցին Էստոնիայի հավաքականին: Հաշիվը 43-րդ րոպեին 11 մ հարվածով բացեց Բենջամինսենը: Ընդմիջումից քիչ անց դաշտի տերերը կրկին 11 մ հարվածի իրավունք ստացան: Այս անգամ Բենջամինսենի հարվածը հետ մղեց դարպասապահը, սակայն երկրորդ հարվածով Հանսենը գրավեց դարպասը: C խմբում հանդես եկող Ֆարերների հավաքականը անդրանիկ հաղթանակը տոնեց: Թիմը 7 խաղում վաստակած 4 միավորով եզրափակում է աղյուսակը:

Աշխարհի վերջին առաջնության բրոնզե մրցանակակիր Գերմանիայի հավաքականը գործնականում լուծեց եզրափակիչի ուղեգրի հարցը: Բաքվում գերմանացիները 3-1 հաշվով հաղթեցին Ադրբեջանի հավաքականին, որին մարզում է գերմանացի Բերտի Ֆոգտսը: Արդեն առաջին խաղակեսում հյուրերը Օզիլի եւ Գոմեսի խփած գոլերի շնորհիվ վճռել էին հանդիպման ելքը: Միայն խաղավարտից մեկ րոպե առաջ Հուսեյնովին հաջողվեց խփել միակ պատասխան գնդակը, սակայն ավելացված ժամանակում Շուրլեն կրկին վերականգնեց 2 գնդակի առավելությունը: Գերմանիայի ընտրանին 7-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ 21 միավորով վստահորեն շարունակելով գլխավորել A խմբի աղյուսակը: 2-րդ տեղում ընթացող բելգիացիները 7 խաղում 11 միավոր են վաստակել: 2-րդ ուղեգրի համար պայքարում նրանց գլխավոր հակառակորդը Թուրքիայի ընտրանին է, որն ունի 10 միավոր:

D խմբում Բելառուսի եւ Բոսնիայի հավաքականները հաղթանակներ տոնելով, մոտեցան առաջատար Ֆրանսիայի ընտրանուն: Բելառուսները 2-0 հաշվով հաղթեցին Լյուքսեմբուրգի ֆուտբոլիստներին, իսկ բոսնիացիները նույնիսի արդյունքով պարտության մատնեցին ալբանացիներին:

E խմբում կայացած 2 հանդիպումներում էլ գրանցվեցին խոշոր հաշիվներ: Շվեդները 5-0 հաշվով ջախջախեցին ֆիններին, իսկ Հունգարիայի հավաքականը հյուրընկալվելիս 3 անպատասխան գնդակ խփեց Սան Մարինոյի ընտրանու դարպասը: Շվեդները 6 խաղից հետո վաստակած 15 միավորով 2-րդ տեղում են: Առաջատարը 18 միավոր ունեցող Հոլանդիայի հավաքականն է:

## Ֆանտաստիկ առաջարկ Պակյաոյին

Ամերիկյան «Ֆորբս» հանդեսի տվյալներով աշխարհի ամենահարուստ մարդը՝ մեքսիկացի միլիարդատեր Կառլոս Սլիմը ֆիլիպինցի բռնցքամարտիկ Մենի Պակյաոյին 65 մլն դոլար է առաջարկել Մեքսիկայում տեղացի բռնցքամարտիկներից մեկի հետ մենամարտելու համար: Պակյաոյին հետաքրքրել է առաջարկը, ուստի սկսվել են բանակցությունները: Նրա հավանական մրցակից են համարում առաջին միջինքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Սաուլ Ալվարեսին:

## Ռենատոն այլեւս «Ուլիսում» չէ

Փոխադարձ համաձայնությամբ «Ուլիսը» խզել է պայմանագիրը բրազիլացի կիսապաշտպան Ռենատոյի հետ: Վերջինս ընթացիկ մրցաշրջանի սկզբում էր ընդգրկվել «Ուլիսում»՝ Սլովենիայից վերադառնալով Հայաստան: Փորձառու ֆուտբոլիստի հետ «Ուլիսի» մարզիչները մեծ հույսեր էին կապել, սակայն վնասվածքների պատճառով Ռենատոյին այդպես էլ չհաջողվեց լավ մարզավիճակ ձեռք բերել:

Հայաստանում Ռենատոն իր լավագույն տարիներն անցկացրել է «Արարատում», որտեղ հիանալի էր համագործակցում իր հայրենակից Մարկոսի հետ:



# Գրոսմայստերի կոչում Տաթեւ Աբրահամյանին

Armchess.am-ի տեղեկացմամբ, ՖԻԴԵ-ն կանանց գրոսմայստերի կոչում է շնորհել 23-ամյա Տաթեւ Աբրահամյանին: Միջազգային վարպետի կոչմանն են արժանացել 16-ամյա Կարեն Հ. Գրիգորյանը եւ 22-ամյա Աննա Հայրապետյանը:

Տաթեւ Աբրահամյանը ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում եւ 4 անգամ դարձել է այդ երկրի շախմատի առաջնությունների մրցանակակիր, հանդես է եկել շախմատային օլիմպիադաներում: Այս օրերին Տաթեւը Հայաստանում է ու պատրաստվում է մասնակցել հունիսի 15-ին Ջերմուկում մեկնարկող Կարեն Ասրյանի հուշամրցաշարին:

# Դասակարգման ցուցակները կհրապարակվեն ամեն ամիս

Արաբական Միացյալ Էմիրությունների Ալ Էյն քաղաքում կայացած ՖԻԴԵ-ի նախագահական նիստում որոշվել է հուլիսի 1-ից սկսած ուժեղագույն շախմատիստների դասակարգման ցուցակները կազմել յուրաքանչյուր ամիս, ինչպես դա արվում է ֆուտբոլում: Մինչ այդ դասակարգման ցուցակները հրապարակվում էին երկու ամիսը մեկ:

Հիշեցնենք, որ մայիսի դրությամբ Լեւոն Արոնյանը դասակարգման ցուցակում 2808 վարկանիշով 3-րդ տեղն էր զբաղեցնում: Ցուցակը 2817 վարկանիշով գլխավորում էր Վիշվանաթան Անանդը, որին 2 միավորով էր զիջում նորվեգացի Մագնուս Կառլսենը:

Նախագահական նիստում նաեւ հաստատվել է շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության խաղացանկը: 1-ին փուլը կանցկացվի Ռոստովում օգոստոսի 1-15-ը: Սեպտեմբերի 1-15-ը 2-րդ փուլի մասնակիցներին կհյուրընկալի չինական Շենչժեն քաղաքը, իսկ 3-րդ փուլի մրցաշարը կանցկացվի հոկտեմբերի 8-23-ը Նալչիկում: Մյուս երեք փուլերը տեղի կունենան հաջորդ տարի: Ապրիլին շախմատիստուհիները կմրցեն Ստամբուլում, հունիսին կհյուրընկալվեն Ջերմուկում, իսկ մրցավեճը կավարտեն սեպտեմբերին Կազանում կայանալիք 6-րդ փուլի հանդիպումներով:

ՖԻԴԵ-ն արդեն հրապարակել է Գրան պրիի մասնակիցներից 10-ի ազգանունները. Հոու Յիֆան, Ռուան Լուֆեյ, Համպի Կոներու, Ժժաո Սյուե, Տատյանա Կոսինցեւա, Անտուանետա Ստեֆանովա, Նադեժդա Կոսինցեւա, Աննա Մուզիչուկ, Եկատերինա Լահնո եւ Վիկտորիա Չմիլիտե: Եվս վեց մասնակցի կընտրեն մրցաշարերի կազմակերպիչները: Պարզ է, որ Հայաստանը Գրան պրիում ներկայացնելու է Էլինա Դանիելյանը: Եվս երկու մասնակցի կորոշի ՖԻԴԵ-ի նախագահը:

Նախագահական նիստում նաեւ որոշվել է 2013-ի կանանց եւ տղամարդկանց աշխարհի թիմային առաջնություններն անցկացնել Թուրքիայում:

# Մրցագորգ դուրս կգան 9 ըմբիշներ

Այսօր Թբիլիսիում մեկնարկում է հունահռոմեական ոճի ըմբշամարտի Գրան պրիի խաղարկությունը, որին Հայաստանից կմասնակցեն 9 ըմբիշներ: Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանը թիմում ընդգրկել է Արմեն Չոմարյանին (55 կգ), Հարություն Հովհաննիսյանին (55 կգ), Վահրամ Խաչատրյանին (60 կգ), Ալեքսան Միքայելյանին (60 կգ), Խորեն Մելիքյանին (66 կգ), Մաքսիմ Սահակյանին (74 կգ), Տիգրան Սահակյանին (84 կգ), Հրաչյա Հովհաննիսյանին (84 կգ) եւ Սարգիս Տոնոյանին (94 կգ):

# Ռոնալդոյի հրաժեշտի խաղը



Բրազիլացի հանրահայտ ֆուտբոլիստ, աշխարհի կրկնակի չեմպիոն Ռոնալդոն վերջնականապես հրաժեշտ տվեց ֆուտբոլին: Նրա պատվին հրաժեշտի խաղ էր կազմակերպվել Սան Պաուլոյի «Պակաեմբու» մարզադաշտում, որտեղ Բրազիլիայի հավաքականը ընկերական մրցախաղում ուժերը չափեց ռումինացիների հետ:

Բրազիլացիները խաղադաշտ էին դուրս եկել մարտական կազմով: Բացակայում էին միայն Դանի Ալվեսը, Ռամիրեսն ու Էլանոն: Ռոնալդոն խաղադաշտ մտավ հանդիպման 30-րդ րոպեին՝ փոխարինելով Ֆրեդին, որն 8 րոպե առաջ բացել էր հաշիվը: Չնայած ավելորդ քաշին, Ռոնալդոն ակտիվորեն մտավ խաղի մեջ ու կարող էր նույնիսկ գոլի հեղինակ դառնալ: Դրվագներից մեկում նա մոտ տարածությունից հարվածեց դարպասապահի վրա: Քիչ անց նրա հարվածը հետ մղեց դարպասապահը:

Ռոնալդոն ընդամենը 15 րոպե անցկացրեց խաղադաշտում: Ընդմիջմանը կայացավ նրա մեծարման արարողությունը: Ռոնալդոն խաղադաշտ մտավ իր որդիների՝ Ռոլանդի եւ Ալեքսի հետ: Երկրորդ խաղակեսը Ռոնալդոյի փոխարեն շարունակեց Նիլմարը: Բրազիլիայի հավաքականին հաջողվեց պահպանել հաղթական 1-0 հաշիվը:

# Թայսոն Հեյը մրցաշրջանի լավագույն արդյունքը ցույց տվեց

Ֆլորիդայի նահանգում անցկացված թեթեւ աթլետիկայի միջազգային մրցումներում ամերիկացի արագավազորդ Թայսոն Հեյը 100 մետր վազքում ցույց տվեց ընթացիկ մրցաշրջանի լավագույն արդյունքը՝ մրցատարածությունը հաղթահարելով 9,79 վրկ-ում:

Հետաքրքրական է, որ մինչեւ Թայսոն Հեյի մրցասպարեզ դուրս գալը ընդամենը մի քանի ժամ առաջ ճամայկացի արագավազորդ Սթիվ Մալինգսն էր մրցաշրջանի լավագույն արդյունքը ցույց տվել՝ Օրեգոնի նահանգում անցկացված «Ադամանդե լիգայի» մրցումներում 100 մետրը հաղթահարելով 9,80 վրկ-ում:

Իսկ 100 մետր վազքի համաշխարհային ռեկորդը պատկանում է օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, ճամայկացի հանրահայտ արագավազորդ Ուսեյն Բոլտին, որը մրցատարածությունը հաղթահարել է բոլորից արագ՝ 9,58 վրկ-ում: Թայսոն Հեյը նույն մրցատարածության ԱՄՆ-ի ռեկորդակիրն է (9,69 վրկ): Ամերիկացի մարզիկը մտադրվել է մասնակցել Նյու Յորքում կայանալիք «Ադամանդե լիգայի» մրցումների հերթական փուլին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Ի՞նչ կասի Տադիչն Ալիեւին

Երեկ սկսվել է Իլհամ Ալիեւի պաշտոնական այցը Սերբիա: Դա կարծես պատասխան ժեստ է: Եվ, այդուհանդերձ, խորհրդանշական է, որ Կազանի բարձր մակարդակի հանդիպումից առաջ եվրոպական մայրաքաղաքներից հենց Բելգրադն է ընդունում Ադրբեջանի նախագահին:

Նախօրեին ԼՂ հարցով բանակցային գործընթացի վերաբերյալ որոշ ակնարկներ էլմար Մամեդյարովն է արել, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը: Իր հերթին ադրբեջանական «Զերկալո»-ի մեկնաբանը ենթադրում է, որ, հնարավոր է, Կազանում «կողմերին խաղաղություն պարտադրելու փորձ արվի»: Նա միաժամանակ կարծում է, որ «Կազանը «Դեյթոն» է նաեւ Ադրբեջանի համար»:

Ըստ երեւույթին, պաշտոնական Բաքվում մոտենում է այն համոզմանը, որ «ամեն ինչ ստանալ եւ ոչինչ չտալ» հնարավոր չէ: Թերեւս այդ է պատճառը, որ մեկ այլ ադրբեջանցի մեկնաբան կարծում է, թե «Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ ավելի հեշտ կլիներ համաձայնության գալ», բայց դա նույնն է, ինչ հայկական կողմերն ասեին, որ Հեյդար Ալիեւն իրավիճակի ավելի սթափ պատկերացում ուներ: Այդ հանգամանքն, ի դեպ, ընդգծել է նախկին ռուսաստանցի միջնորդ Վլադիմիր Կազիմիրովը եւ նույնիսկ նկատել տվել, որ Իլհամ Ալիեւը հավասարիմ չէ նախագահի պաշտոնն ստանձնելու ժամանակ տված երդմանը՝ «հավասարիմ մնալ Հեյդար Ալիեւի քաղաքականությանը»:

Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Հեյդար Ալիեւի մասին խորհրդածությունները, սակայն, իրական քաղաքականության հետ ոչ մի կապ չունեն: Երազանքը քաղաքական կատեգորիա չէ: Առարկայական վիճակն այն է, որ միջնորդները բանակցող կողմերից սպասում են սկզբունքների համաձայնություն: Իսկ ադրբեջանական կողմը դա ընկալում է այնպես, որ հետագայում Լեռնային Ղարաբաղի «հանդեպ իրավազորության հարցը մնում է բաց»: Այդպես է, համենայն դեպս, խնդիրն ընկալում «Զերկալո»-ի մեկնաբանը, որին դիտողունակության մեջ դժվար է մերժել:

Եվ ահա այս տարին Իլհամ Ալիեւը մեկնել է Բելգրադ: Տեսականորեն հնարավոր է, որ կողմերն այդ հանդիպմանը միմյանց «տարածքային ամբողջականությունը հարգելու» վերաբերյալ հայտարարություն անեն: Երբ Բորիս Տադիչն այցելել էր Բաքու, նման դիրքորոշում հնչեցվել է: Բայց դա գործնական նշանակություն հազիվ թե ունի. Ադրբեջանն այն երկիրը չէ, որ ցանկություն ունի Սերբիայի տարածքային ամբողջականությունը պաշտպանելու խնդիր հարուցել: Նա չափազանց մեծ կախում ունի արեւմտյան ներդնողներից եւ չի կարող կտրել այն ճյուղը, որի վրա նստած է: Գրեթե նույն չափով էլ Սերբիան է անզոր միջազգային մակարդակներում հանդես գալ որպես Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» պաշտպան: Նախ, նա այդ ներուժը չունի: Երկրորդ, ի՞նչ է տալիս Սերբիային Ադրբեջանի «տարածքային ամբողջականությունը», եթե Բելգրադում քաջ գիտեն, որ անկախ ուրիշ որեւէ հակամարտության որեւիցե այլ կերպ լուծումից, Կոսովոյի հարցում արեւմտյան դաշինքի երկրներն իրենց որոշումը չեն վերանայելու:

Տադիչ-Ալիեւ բանակցություններում, այսպիսով, «տարածքային ամբողջականությունը փոխադարձաբար հարգելու եւ պաշտպանելու» բաղադրիչն էական նշանակություն հազիվ թե ունենալու է: Իսկ ահա Կոսովոյի հարցում Բելգրադի հանդուրժողականության իմաստով Իլհամ Ալիեւի սերբական ուղեւորությունն, ընդհակառակը, Կազանի հանդիպումից առաջ կարող է գործնական լուրջ դերակատարություն ունենալ:

Բելգրադում Իլհամ Ալիեւը թերեւս հնարավորություն ունի համոզվելու, որ առանց Կոսովոյի Սերբիան իրեն այնքան էլ վատ չի զգում: Իհարկե, վատ չէր լինի, եթե նա կարողանար զուգահեռներ անցկացնել եւ համոզվել, որ երկու՝ Կոսովոյի եւ Լեռնային Ղարաբաղի դեպքում էլ որոշիչը բնակչության կամքն է, այլ ոչ թե՝ «մետրոպոլիայի» կառավարության վճռականությունը: Քանի որ թե՛ Միլոշեւիչը, թե՛ ադրբեջանական իշխանությունները նախկինում փորձել են «իրավազորություն վերականգնել»՝ հենվելով բացառապես ուժի վրա: Եվ եթե Կոսովոյի դեպքում միջազգային հանրությունը շատ արագ է արձագանքել, ապա ԼՂ հարցում ամեն ինչ արվում է, որպեսզի Ադրբեջանը «դեմքը լիովին չկորցնի»:

Միլոշեւիչից մինչեւ Տադիչ Սերբիան անցել է մի ճանապարհ, որը նրա համար այսօր հեռանկար է բացում: Այդ մասին, թվում է, Սերբիայի նախագահն Իլհամ Ալիեւին բավական ծանրակշիռ ասելիք ունի: Խնդիրն այն է, թե որքանով է վերջինս պատրաստ լսել եւ համապատասխան եզրակացություններ անել: Իսկ եթե չի լսելու եւ եզրակացություններ չի անելու, ապա ինչո՞ւ հատկապես Կազանից առաջ է մեկնել Բելգրադ: Չէ՞ր կարող «նախապես ծրագրված այցը» մի փոքր հետաձգել:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# «Հայեր», որոնք ադրբեջանցի են

Վերջին տարիներին բազմաթիվ ադրբեջանցիներ լքել են իրենց երկիրն ու բնակություն հաստատել եվրոպական երկրներում: Նրանց մեջ կան Ադրբեջանում բավական հայտնի մարդիկ՝ գիտնականներ, արվեստագետներ, քաղաքական հետապնդումներից խուսափող փախստականներ:

Ինչպես հաղորդում է Panorama.am-ը՝ հղում անելով ադրբեջանական pia.az լրատվական կայքին, արտագաղթած ադրբեջանցիների մի հասված Եվրոպայում ապրում է հայերի անվան տակ: Միայն Ֆրանսիայում, ըստ կայքի, մոտ 100 այդպիսի ադրբեջանական ընտանիք կա:

Մասնավորապես, արտերկրում ապրող մի ադրբեջանցի նշել է, որ Հադիյե անունով մի կին զբաղվում է ադրբեջանցիներին Ֆրանսիա տեղափոխելով: Նա զգալի գումարի դիմաց կեղծ հայկական ծննդյան վկայականներ է տալիս այդ մարդկանց, որոնք էլ դրանք ներկայացնում են Ֆրանսիայի ոստիկանական մարմիններին:

Ըստ որում Հադիյեի հաճախորդների շարքերում բավական հայտնի մարդկանց հարազատներ կան: Նշվում են Ադրբեջանում հայտնի ջութակահար Քամիլի եղբոր եւ Capital Bank-ի Շեքիի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Մամադ Սադրեդինովի աղջկա՝ Նիգարի անունները: Ի դեպ, կայքի տեղեկություններով, Նիգարն ապրում է Ֆրանսիայում Նելլի Բաբայան անվան տակ:

Ըստ pia.az-ին հասած որոշ տեղեկությունների՝ շատ ադրբեջանցի պաշտոնյաների հարազատներ նույնպես կեղծ հայկական ինքնությամբ հաստատվում են Եվրոպայում:

Մնում է միայն պարզել, թե այս ամենի պատճառը ո՞րն է: Այն, որ Ֆրանսիայում հայերին ավելի մեծ տեղ են տալիս, միգուցե այն, որ Ադրբեջանը լքած ադրբեջանցիները չեն էլ ցանկանում հիշատակվել որպես ադրբեջանցիներ՝ «թեկուզ» եւ հայ կոչվելու հաշվին: Չի բացառվում անգամ, որ հարեւանների այս «հայացումը» նպատակ ունի պարզապես «ապացուցելու», որ արտասահմանում որքան շատ հայեր են ապրում՝ «Հայաստանը լքելով ոչ լավ


**Վաճառվում է**
**Daewoo Matiz Best**
մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 3 600 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:
**Հեռ.՝ (094) 577-578**


## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Արարատի մարզի Հայանիստ համայնքում հողի սեփականատեր Սամվել Լաբլաջյանի ձկնաբուծական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսներից 150 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. հունիսի 15-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն**

## Ցավակցություն

Հայաստանի ժուռնալիստների միությունը խոր վիշտ է ապրում անվանի լրագրող **Լեւոն Ղազարյանի** մահվան առթիվ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին:

*ՀԺՄ նախագահ Աստղիկ Գեւորգյան*


**Վաճառվում է** LADA Priora մակնիշի ավտոմեքենա, 2008 թվականի արտադրության, 2010 թվականի վաճառք: Գտնվում է գործարանային երաշխիքի մեջ: Վազքը՝ 13 000 կմ, գույնը՝ սեւ մետալիկ, հեչբեք: Ունի՝ կոնդիցիոներ, անվտանգության բարձիկ, բորտ համակարգիչ, հայելիների եւ ապակիների (մգեցված) էլեկտրոնային կարգավորում, բարձրակարգ աուդիո համակարգ՝ Bluetooth-ով եւ iPhone/iPod միացումով: Տրվում են նաեւ 4 ձմեռային անվադողեր՝ համարյա նոր վիճակում:
**Հեռ.՝ (094) 401-337**


## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացուհի Էլմիրա Գեւորգյանը երեկ տաքսու մեջ մոռացել է իր փոքրիկ պայուսակը՝ դեղերով եւ մի քանի այլ անձնական իրերով: Նա տաքսիով ուղեւորվել է Մաշտոցի պողոտայից ժամը 15.09-ին դեպի Մոնումենտ: Գտնողին խոստանում ենք դրամական պարգեւ: Խնդրում ենք զանգահարել՝ 077020160


**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.vdv.am կայքում**




## ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀՀ Կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 618-Ն որոշման համաձայն մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու կամ խոտանման կապակցությամբ հաշվառումից հանելու դիմում ներկայացվելու դեպքում տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանված է համարվում 2011 թվականի հունվարի 1-ից: Բացառություն է կազմում այն դեպքը, երբ նախքան դիմում ներկայացվելը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ այն օրինական հիմքով տիրապետող այլ անձի նկատմամբ նշանակվել է տուգանք տվյալ տրանսպորտային միջոցն առանց ԱՊՊԱ պայմանագիր ունենալու ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարելու կամ ԱՊՊԱ պայմանագիր չունենալու համար. տվյալ դեպքում տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանված է համարվում տուգանք նշանակելու մասին որոշման ընդունման օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ Կառավարության վերոհիշյալ որոշման կապակցությամբ Ճանապարհային ոստիկանությունը և Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոն տեղեկացնում են՝**

***ՄԻՆՉԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը***

հաշվառված ավտոտրանսպորտային միջոցներ ունեցող բոլոր այն քաղաքացիները, ովքեր առ այսօր ԱՊՊԱ պայմանագրեր չեն կնքել կամ կնքված ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետն արդեն ավարտվել է, համապատասխան հաշվառման մարմիններում այդ ավտոտրանսպորտային միջոցները հաշվառումից ժամանակավոր հանելու դեպքում չեն վճարի ԱՊՊԱ պայմանագիր չունենալու համար օրենքով սահմանված տուգանքները: Ընդ որում հաշվառումից ժամանակավոր հանելու համար պարտադիր չէ ներկայացնել տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր. անհրաժեշտ է ներկայացնել միայն համապատասխան դիմում՝ կցելով ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը և հաշվառման համարանիշերը:

***Հիշեցնում ենք նաև, որ ավտոտրանսպորտային միջոցները հաշվառումից ժամանակավոր հանելու ու հաշվառումը վերականգնելու գործընթացներն անվճար են:***

Մանրամասների համար զանգահարել՝ 58-00-34, 58-00-43

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սարյանի այգու մոտակայքում կորել է 4 տարեկան սպիտակ գույնի «Պուդել» ցեղատեսակի շուն՝ «Պուշոկ» մականունով:

Գտնողին խոստանում ենք դրամական պարգեւ:

Խնդրում ենք զանգահարել 091-406210 հեռախոսահամարով՝ Նաիրային:







տուրիստական գործակալությունն առաջարկում է 3-ից 15-օրյա բարձրակարգ շրջագայություններ Արեւմտյան Հայաստան (Կարս, Անի, Վան, Մուշ, Բիթլիս, Տիգրանակերտ) եւ Կիլիկիա (Ադանա, Սիս, Եդեսիա, Նեմրութ սար, Մուսա լեռ, Կոռիկոս), Սիրիա՝ Հալեպ:

**Հասցեն՝ Երեւան, Իսահակյան 28, սենյակ 20:**
**Հեռ.՝ 51-92-26, (094) 203-206**
**Էլ. փոստ՝. info@anitour.org**
**Կայք՝ www.anirour.am**


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 8.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: